Մի հետաքրքիր բան եմ մտածելու, չեմ ուզում հիմա էդ մասին խոսեմ, որ չկանխեն: Էշին հավես չարավ, պիտի նոր բան մտածենք, որ հավեսը գա: Հեծանիվ քշել շատ է սիրում, գուցե հեծանիվով մի բան մտածենք: Էս պահի դրությամբ նրան տեղը դնելու ամենալավ տարբերակը ընտրություններով հեռացնելն է: Դա ամենաքաղաքակիրթ եղանակն է:

Կարդացեք՝ էջ 4

Կարեւոր է չբերել հարաբերություններն այդպիսի կետի, երբ դիվանագիտությունը, ներողություն եմ խնդրում ընթերցողից մի քիչ ժողովրդական եւ ոչ գրական այս ձեւակերպման համար, վերածվում է մանր շուստրիության: Բայց, ցավոք սրտի, մենք գործ ունենք Հայաստանի արտաքին քաղաքականության այսպիսի տրանսֆորմացիայի հետ:

Կարդացեք՝ էջ 6

Անցյալ օրը գոռում, ճվում էր ընտրարշավի ժամանակ, թե մարդիկ կան, որոնք ուզում են դառնալ վարչապետ, գլուխները պատերին են տալիս: Ապշում եմ՝ ինչ է նշանակում, այսինքն՝ վարչապետի աթոռը սեփականաշնորհել ես այնպես, որ ով ուզի դառնալ վարչապետ, գլուխը պատռվ պիտի տա: Հասկանում եք, թե ինչ աննորմալ իրավիճակում ենք:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 77 (4212), 15 մայիս, ուրբաթ, 2026

www.hraparak.am

Մեր տեղեկություններով՝ օրեր առաջ իրավապահները Մերձավան գյուղից, որտեղ տեղի էր ունեցել համայնքապետ Վալոդյա Գրիգորյանի սպանությունը, հեռացրել են Գրիգորյանին սպանելու մեջ մեղադրվող Գեւորգ Հարությունյանի ընտանիքի վերջին անդամներին՝ տատին ու պապին, որպեսզի վենդետան կանխեն: Մերձավանի մեր աղբյուրները հայտնում են, որ գյուղում Օհանյաններ, Ախտոյաններ եւ Հարությունյաններ գրեթե չեն մնացել: Մեր զրուցակցի խոսքով՝ ոստիկանությունը հերթապահությունը գյուղում շարունակում է: Հիշեցնենք, որ Վ. Գրիգորյանի սպանությունից հետո Մերձավանի բնակիչները ստորագրահավաք էին սկսել՝ Ախտոյանների ընտանիքին գյուղից հեռացնելու պահանջով: ՔԿ-ն էլ մեղադրյալների հարազատներին, նրանց հետ փոխկապակցված անձանց, մասնավորապես՝ ՔՊ-ական Մհեր Ախտոյանի ընտանիքին հեռացրել էր գյուղից: Մհեր Ախտոյանն էլ սպանությունից 10 օր առաջ էր հեռացել ՀՀ-ից:

Հշխանությունը մտադիր է ընտրակաշառք տալու եւ վերցնելու համար Քրեական օրենսգրքով նախատեսված պատիժն առավել խստացնել, չնայած հիմա էլ թեթեւ չէ: Գործող նորմերով՝ ընտրակաշառք տալու համար մինչեւ 8 տարի ազատազրկում է նախատեսվում, ըստ նոր առաջարկության՝ այն կփոխարինվի մինչեւ 10 տարի ազատազրկմամբ: Իսկ ընտրակաշառք վերցնելու համար, որի համար նախատեսված էր պատիժ մինչեւ 7 տարի, նախատեսվում է մինչեւ 9 տարի ազատազրկում: Ըստ ամենայնի, այս նախագիծը կընդունեն արտահերթ ռեժիմով ու թերեւս նպատակ ունեն ահաբեկել ընդդիմադիր ուժերին եւ նրանց համակիրներին, որոնց նկատմամբ շուրջ երկու ամիս է՝ կաշառքի շինծու գործեր են կարվում: Այդ գործերում այնպիսի անհեթեթ արտահայտություններ են հանդիպում, ինչպիսիք են՝ «աշխատավարձի անվան տակ ընտրակաշառք են բաժանել», «չպարզված անձին չպարզված բնույթի գույքային խոստում են տվել»:



Հայաստանի գործող իշխանությունների հակառուսական պահվածքի վերաբերյալ ռուսական շրջանակների ոչ միայն հռետորաբանությունն է օր-օրի կոշտանում, այլեւ գործնական քայլեր են դրանց հետեւում: Մեզ պատմեցին, որ հայ տնտեսվարողների նկատմամբ խոչընդոտներ ստեղծելուց բացի, արդեն քանի օր է՝ արգելք է առաջանում Լարսով Ռուսաստան արտագնա աշխատանքի մեկնող մեր հայրենակիցների համար: Խոսակցական լեզվով ասած՝ խոպանչիներն արդեն մի քանի օր է՝ խնդիրներ ունեն Ռուսաստան մեկնելիս, ոմանց Լարսից անգամ հետ են ուղարկել:

Հավերժ օգնական

Նիկոլ Փաշինյանի կադրերը մեկը մյուսից անհաջող, մեկը մյուսից ոչ պրոֆեսիոնալ ու ստորաքարշ են: Երբեւէ Հայաստանի Հանրապետության բարձրաստիճան պաշտոնյայի փաղանգն այսքան վատը չի եղել եւ այսքան գորշ: Նույնիսկ բանն այն չէ, որ նրանք պատրաստ են իրենց նշանակողի ամենաապօրինի հրահանգները կատարել եւ նրա ամենախայտառակ ապօրինությունների վրա աչք փակել: Նրանք իրենց պաշտոնների արժեքն ու պատասխանատվությունը չեն գիտակցում. նրանք՝ բոլորը, «Նիկոլի աշխատողներն» են: Երբ Փաշինյանն իր օգնական Աննա Վարդապետյանին նշանակում էր ՀՀ գլխավոր դատախազ, աղմուկ բարձրացավ, քննադատեցին: Բայց ես կարծում էի, որ օգնականի կենսագրությունը չէ խնդիրը՝ գուցե երիտասարդ կինը հաղթահարի օգնականի կոմպլեքսն ու կայանա իր պաշտոնում: Նման օրինակներ եղել են, երբ մարդը կայացել է պաշտոնում եւ ապացուցել, որ իր նշանակման առիթով եղած հոռետեսությունն ավելորդ էր: Սակայն ժամանակն անցավ, եւ մենք հասկացանք, որ դատախազը շարունակում է որպես վարչապետի օգնական աշխատել, դրան գումարվեցին ոչ մի բանի առաջ կանգ չառնելու, ամենաանթույլատրելի հրահանգները կատարելու ջերմեռանդությունն ու դաժանությունը: Եվ բախվեցինք մի իրականության հետ, որ իրավապահ մարմինները դարձան մահակ՝ չափն անցած իշխանության ձեռքում: Գլխավոր դատախազ տիկինը, իհարկե, անխելք չէ, ոչ էլ՝ անգրագետ, պարզապես չի գիտակցում իր առաքելությունը: Այս էլ որերորդ անգամ նա իր ելույթներում մի արտահայտություն է հնչեցնում, թե դատախազը պետք է կարողանա «ոչ» ասել, ինչը նշանակում է, որ նրան թիմակիցները հեղեղում են խնդրանքներով: Եվ նա անգամ չի գիտակցում, որ դատախազի գլխավոր որակը «ոչ» ասելու ունակությունը չէ, այլ՝ օրենքին ծառայելը, որ անմեղ մարդիկ չհայտնվեն բանտում, մեղավորներն՝ ազատության մեջ:

Հայաստանում այնպիսի տոտալ վախի մթնոլորտ է հաստատված, որ քաղաքացիները վախենում են անգամ կանգնել, շփվել, զրուցել լայվ ռեժիմով մայրաքաղաքի փողոցներում քարոզարշավ անող ընդդիմադիր ուժերի ներկայացուցիչների հետ: Մեզ պատմեցին, որ «Հայաստան» դաշինքի ներկայացուցիչներին տասնյակ քաղաքացիներ թաքուն ժեստերով խնդրում-հասկացնում են, որ լայվն անջատեն, որպեսզի կարողանան անկաշկանդ շփվել: Երբ անջատում են, խոստովանում են, որ վախենում են տեսախցիկների առջեւ երեւալ ու հայտնվել իշխանության պատժիչ մեքենայի գործողությունների թիրախում: Գաղտնիք չէ, որ արդեն տեւական ժամանակ է՝ իշխանություններն իրավապահների միջոցով որս են սկսել ընդդիմադիր ուժերի համակիրների շրջանում, շտաբների մոտ շուրջօրյա հերթապահություն են անում, տեսախցիկներ են տեղադրել մոտակայքում, բացահայտում են ելումուտ անողների ինքնությունը եւ փորձում ճնշելով, վախեցնելով՝ հետ կանգնեցնել ընդդիմությանն աջակցելու կամ ընտրելու մտքից:

ԵՊՀ-Ն ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԱՆԿՈՒՄ Է ԳՐԱՆՑԵԼ

Հայաստանի բուհական համակարգը տարեցտարի անկում է ապրում՝ զարգանալու փոխարեն: Եվ ուսանողների քանակն է նվազում, եւ ռեյտինգները չեն աճում: Աշխարհում բուհերի ռեյտինգավորման տարբեր համակարգեր են գործում: Օրինակ, QS բուհերի ռեյտինգավորման համակարգով (QS World University Rankings) ՀՀ բուհերից միայն ԵՊՀ-ն է ռեյտինգավորվել, այն էլ՝ ամենացածր կատեգորիայում՝ 1001-1200 նիշի շրջանակներում: Ըստ այդ տվյալների, ակնհայտ է դառնում, որ վերջին 5 տարում ԵՊՀ-ն անկում է գրանցել, 2022 թվականին այն եղել է 800-1000-ի մեջ, իսկ 2024-ին զբաղեցրել է 901-րդ տեղը: Տարածաշրջանային բուհերի մեջ սա ամենավատ ցուցանիշն է: Որպեսզի պարզ դառնա, նշենք, որ տասնամյակներ շարունակ միջազգային պատժամիջոցների տակ գտնվող իրանական բուհը՝ Թեհրանի համալսարանը, օրինակ, 322-րդն է աշխարհում: Ադրբեջանական երեք բուհ եւս ռեյտինգավորվել են՝ Բաքվի համալսարանը 688-րդն է:

ՕՊՏԻՄԱԼԱՑՈՒՄ

ԻՆՉՈՒ ԵՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ ՄԱՆԿԱՏՆԵՐՆ ՈՒ ԽՆԱՄՔԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Երեւանի Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ը, որը զբաղվում է ծնողական հոգածությունից զրկված հաշմանդամ երեխաների խնամքով, լուծարվում է: 2004 թվականից առայսօր այն գտնվում էր Իզմիրլյան հիմնադրամի հովանավորության ներքո: Այսօր, սակայն, երեխաների եւ այս կենտրոնի ճակատագիրն անորոշ է: Ըստ լուրերի՝ երեխաներն ազատելու են Երեւանի Քանաքեռ Զեյթուն վարչական շրջանում, Յաղուբյան փողոցում գտնվող շենքը: Ասում են, որ այն գնել է հայտնի բժիշկ, ԱԺ նախկին նախագահ Արա Բաբլոյանը եւ շուտով այստեղ նոր հիվանդանոց է բացելու: Այլ տեղեկություններով՝ շենքը դատարկվում է, քանի որ այստեղ վերանորոգում է սկսվում, տեղ էին փնտրում, որ երեխաներին տեղափոխեն, մինչեւ վերանորոգման աշխատանքների ավարտը:

Սա առնվազն տարօրինակ է, քանի որ շենքը վերանորոգվել էր 2020 թվականին՝ Իզմիրլյան հիմնադրամի աջակցությամբ, ավելի էր հարմարեցվել հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքներին:

«Երեւանի Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի վերաբերյալ հստակ պաշտոնական տեղեկությունների համար դիմեցինք Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն, որի ենթակայությամբ այն գործում է: Ի՞նչ է կատարվում Իզմիրլյան մանկատան հետ: Նախարարության խոսնակ **Նվեր Կոստանյանը** հայտնեց, որ չունի նման ինֆորմացիա, մանկատունն էլ չի փակվում: Սակայն կա կառավարության որոշում՝ «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» պետական ոչ առեւտրային կազմակերպությունն այլ հաստատության հետ միավորելու վերաբերյալ: Մարի Իզմիրլյանի անվան մանկատունը, որը հիմնադրվել է 2003 թվականին, այժմ միավորվում է «Երեւանի մանկան տուն» պետական ոչ առեւտրային կազմակերպության հետ՝ Արմենակ Արմենակյանի 119 հասցեում գտնվող, որը հայտնի է որպես Նորքի մանկատուն: Իսկ խնամքի երկու կենտրոնների միացման արդյունքում ստեղծվող նոր կենտրոնը նոր անուն ունի՝ «Երեխայի շուրջօրյա խնամքի կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպություն: Գույքի ընդունում-հանձնումն իրականացնելու է Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը: «Բայց երեխաները, որոնք այդտեղ ապրում էին, մնալու են այնտեղ եւ հիմա էլ այնտեղ են: Փոխվում է միայն վարչական մասը: Միավորվող հաստատություններից յուրաքանչյուրն իր շենքում է գործունեություն ծավալում եւ ծավալելու»,- ասում է Կոստանյանը: Որեւէ տեղեկություն շենքի վաճառքի մասին նրան հայտնի չէ:

Արա Բաբլոյանի որդին՝ **Արման Բաբլոյանը**, մեզ հետ զրույցում հերքեց մանկատան շենքը գնելու մասին տարածվող լուրերը: «Այդ ինֆորմացիան բացարձակապես սխալ է: Նման միտք կամ գաղափար անգամ չի եղել կամ խոսակցություն»,- ասաց նա:

Թե ինչու են փակում-միավորում Երեւանի երկու հնագույն մանկատները, անհասկանալի է: Կառավարության որոշման հիմնավորումների մասում մի երկու ֆրազ գտանք. «Նախագծով առաջարկվում է ներդնել կենտրոնացված կառավարման նոր մոդել, որի շրջանակներում նախատեսվում է երկու ՊՈԱԿ-ների վերակազմավորում՝ վարչական ռեսուրսների միավորման միջոցով: Այս մոտեցումը թույլ կտա ապահովել կառավարման արդյունավետության բարձրացում, ռեսուրսների օպտիմալ բաշխում եւ միասնական կառավարման քաղաքականության իրականացում»: Եվ ոչ մի բառ այն մասին, որ հնագույն այս հաստատություններն իրենց ավանդույթներն ունեին, պատմությունը, ի վերջո՝ հարյուրավոր երեխաների տունն ու օջախն էին, եւ միացում-անջատումները, անգամ եթե զուտ տնօրինմանն են վերաբերում եւ կազմակերպչական են, չեն կարող չանդրադառնալ դրանց վրա: Ո՞րն է փոփոխության իմաստը: Նախարարությունից մեր հարցին պատասխանում են, որ խնամքի հաստատությունների միավորմամբ ներդրվում է կենտրոնացված կառավարման նոր մոդել, որի շրջանակում նախատեսվում է Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող երեխաների խնամքի հաստատությունների վերակազմավորում՝ վարչական ռեսուրսների միավորման միջոցով: «Այս մոտեցումը թույլ կտա ապահովել կառավարման արդյունավետության բարձրացում, ռեսուրսների օպտիմալ բաշխում եւ միասնական կառավարման քաղաքականության իրականացում: Կազմակերպությունների միացման ձեւով վերակազմակերպման արդյունքում կձեւավորվի կենտրոնացված կառավարման միավորված համակարգ, որը կնպաստի վարչական եւ սպասարկող անձնակազմի գործառույթների օպտիմալացմանը, կառավարման եւ վերահսկողության մեխանիզմների արդյունավետության բարձրացմանը: Վերակազմավորման արդյունքում հնարավոր կլինի կրճատել այն հաստիքները, որոնք իրականացնում են փոխկրկնվող կամ համընկնող գործառույթներ, ինչն էլ կնվազեցնի ընդհանուր վարչական ծախսերը եւ կզարգացնի կառավարման արդյունավետությունը: Վերակազմավորման արդյունքում հնարավորություն կընձեռվի՝ միեւնույն հաստատությունում իրականացնելու տարբեր ծառայություններ, այդ թվում՝ մասնագիտացված եւ ընդհանուր խնամքի կարիք ունեցող երեխաների շուրջօրյա երկարաժամկետ եւ կարճաժամկետ խնամք, ցերեկային աջակցության ծառայություններ երեխաներին եւ ընտանիքներին: Փոփոխությունների նպատակն է՝ ապահովել վարչական կառավարման արդյունավետության բարձրացում, ֆինանսական ռեսուրսների օպտիմալ օգտագործում, կառավարման գործընթացների պարզեցում եւ հաշվետվողականության բարձրացում»:

Մեր մյուս հարցին, թե արդյոք արվե՞լ է որեւէ ուսումնասիրություն, որի հիման վրա նախարարությունը որոշել է, որ մանկատներ միավորելն արդյունավետ է, պատասխան չստացանք, ինչից եզրակացրինք, որ որեւէ նման ուսումնասիրություն չի արվել:

Իզմիրլյան մանկատունն ու Երեւանի մանկան տունը միավորվող միակ հաստատությունները չեն: Մարտի 26-ի որոշմամբ՝ կառավարությունը «Զատիկ» մանկատունը միավորել է Երեւանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության կենտրոնին, Երեխաների եւ ընտանիքի աջակցության կենտրոնին, Շիրակի մարզի երեխայի եւ ընտանիքի աջակցության կենտրոնը միացրել է «Գյումրու երեխաների տուն» կազմակերպության հետ:

Մանկատների տնօրենները չցանկացան խոսել՝ ասելով, որ իրենց պետք է սոցապնախարարության թույլտվությունը: Տպավորություն ունենք, որ նրանք վախեցած են:

Էջը՝
Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆԻ

ԲԱՑԱՀԱՅՏԵԼՈՎ ԱՆՎՃԱՐ ԴԵՂՈՐԱՅՔԻ «ԿՏԵՐԸ»

Փաշինյանն ու իր թիմը բոլոր քարոզչական «զբոսանքների» ժամանակ՝ թե՛ Երեւանում, թե՛ մարզերում, թոշակառուներին կերակրում են անվճար դեղորայքի մասին հեքիաթներով: Փաշինյանը նույնիսկ մատները ծալելով հաշվում է, թե որքան կարող են թոշակառուները տնտեսել անվճար դեղորայքի հաշվին: Անվճար բուժօգնությունը եւ առողջապահության համընդհանուր ապահովագրությունը, որը մեր՝ բոլորի վճարումներից է իրականացվում, նա ուղղակի տժվժիկ է դարձրել՝ բոլորի երեսով է տալիս:

Հիշեցնենք. քանի որ 65 տարին լրացած բոլոր թոշակառուներն օգտվում են բժշկական ապահովագրությունից, նրանք պետք է անվճար դեղորայք ստանան: Իրականում, սա պանիր է՝ մկան թակարդի մեջ, եւ սա բացահայտեցին առաջին, երկրորդ խմբի հաշմանդամները: Եթե, օրինակ, շաքարախտով հիվանդները նախկինում իրենց դեղորայքն անվճար էին ստանում, այսօր ստիպված են վճարովի հիմունքներով գնել: Մեծ քանակի դեղեր այս պահին արդեն դեֆիցիտ են, մարդիկ դրանք չեն կարողանում ձեռք բերել:

«Թեեւ նախարարությունը ստանդարտ պատասխաններ է տալիս, թե կան դեղերը, մենք բազմաթիվ բողոքներ ենք ստանում մարդկանցից, որոնք գնում են ու չեն կարողանում դեղատներից դեղեր ստանալ»,- ասում է «Առողջության իրավունք» ՀԿ նախագահ **Անուշ Պողոսյանը**: Նա նկատել է, որ, օրինակ, հասարակ Պիրացետամը, որն ինսուլտների, ուղեղի կաթվածների ժամանակ ամենակարեւոր միջոցներից է, չկա: Չկա Միդոկալմ, երեկ արդեն ահազանգեր է ստացել, որ Անալգինի սրվակներ չկան:

«Շատ լուրջ խնդիրներ են առաջանում՝ դեղերի հետ կապված: Մարդիկ մեզ ասում են, որ դեղորայք չկա, որ համավճար են իրենք տալիս, կամ լինում է այնպես, որ անվճար վերցված դեղը հաջորդ ամիս այնքան է թանկանում, որ իրենք արդեն չեն կարողանում ձեռք բերել, քանի որ դեղատներում համավճարային սկզբունք է կիրառվում: Համավճարով ձեռք բերվող դեղերի ցանկը բավականին մեծ է: Այսինքն՝ ապահովագրությունը փոխհատուցում է, ենթադրենք, 1000 դրամ, իսկ դեղի արժեքը 1300 դրամ է, այս 300 դրամը քաղաքացուց վերցնում են: Ես սա շատ էժան դեղորայքի օրինակ բերեցի: Դեպքեր կան, որ հիվանդները ստիպված են լինում 7-8 հազար դրամ վճարել»,- ասում է Անուշ Պողոսյանը:

ՀՀ նախկին վարչապետ **Հրանտ Բագրատյանը** եւս փլուզում է անվճար դեղերի միֆը. «Նախ՝ դեղերի 1/3-ն է միայն ընդգրկված ցանկում: Երկրորդը. այս ընդգրկված դեղորայքը գնելու համար էլ համավճար ես տալիս: Բոլոր առողջապահական հիմնարկները, դեղատները դժգոհ են: Պոլիկլինիկաներում հերթեր են, ինչը մենք կանխատեսում էինք: Հիմա, օրինակ, ես եթե որպես թոշակառու հերթագրվեմ պոլիկլինիկայում, ինձ կասեն՝ արի հունիսի վերջին»:

Ընտրություններից հետո, եթե ՔՊ-ն հաղթի, առողջապահության ապահովագրությունը հիմնականում կդադարի, որովհետեւ դրա իրականացման համար պետք է 660 մլրդ դրամ, իսկ բյուջեով հատկացվել է ընդամենը 240 մլրդ, ինչն արդեն վերջանալու եզրին է: Այս մասին Հրանտ Բագրատյանը զգուշացրել էր դեռ այն ժամանակ, երբ ապահովագրական բժշկությունը նոր էին մտցնում: Այսօր էլ հիշեցնում է. «Առողջապահության գումարը 2025 թվականին եղել է 180 մլրդ, դարձրել են 240 մլրդ, մինչդեռ պետք է դարձնեին 660 մլրդ դրամ: Արդյունքում՝ ստիպված բժիշկներին են քիչ վարձատրում, բժիշկները տուժում են: Մասամբ ստացվում է, որ նրանց հաշվին է իրականացվում ապահովագրությունը: Դեղերն են կրճատում, բժշկական ծառայությունների ցանկը, եւ ստացվում է, որ սա լիարժեք ապահովագրություն չէ, որ ապահովագրություն ոնց որ թե կա, բայց իրականում չկա: Որովհետեւ մեզ հայտնի է, որ բյուջեում այդ փողը նախատեսված չէ, եւ, ամենայն հավանականությամբ, այս ամենը 1-2 ամսվա կյանք ունի, որից հետո լուրջ պրոբլեմներ կսկսվեն»:

Քաղաքաթեսի աթոռի գինը

Նիկոլ Փաշինյանն ընտրություններից առաջ արդեն գործի էր դրել ընդդիմադիր համայնքապետերին պատժելու գործիքակազմը: Դեռ 1 տարի առաջ որոշ ընդդիմադիր համայնքապետերի դեմ քրեական գործեր հարուցվեցին: Այդ գործերը մինչեւ ընտրություն օդում կախված կմնան միայն մեկ պատճառով՝ Փաշինյանը հույս ունի այսկերպ ազդել համայնքների ղեկավարների վրա, որոնք իրենց գլխին կախված վտանգից խուսափելու համար ընտրություններին իր համար ձայներ կապահովեն:

Մեր տեղեկություններով՝ Բյուրեղավանի համայնքապետ Հակոբ Բալասյանն այս օրերին ակտիվորեն լծվել է ՔՊ-ի օգտին ձայներ ապահովելու գործին: Մեզ պատմեցին, որ շտաբ է բացել եւ անձամբ ղեկավարում է ընտրական գործընթացը, աշխատանքի վայրում էլ շատ քիչ է լինում: Ճիշտ է, որ համայնքապետ Հակոբ Բալասյանն այս օրերին զբաղված է ընտրական գործընթացով՝ հարցրինք համայնքապետարանի մամուլի քարտուղար **Մերի Կարապետյանին**: «Համայնքի ղեկավարն այս պահին զբաղվում է համայնքի ղեկավարի գործերով, ոչ մի քաղաքական գործունեությամբ չի զբաղվում: Այդ տարածված լուրերը չեն համապատասխանում իրականությանը»,- ասաց մամուլի քարտուղարը: Մեզ ասացին, որ Հակոբ Բալասյանը սատարում է ՔՊ-ին: «Այո, համայնքապետը հայտարարել է, որ պաշտպանում է վարչապետի թեկնածությունը»: Բայց չէ՞ որ ամիսներ առաջ համայնքապետի լիազորությունները կասեցվել են: «Ես իրավասու չեմ այդ հարցին պատասխանել»,- ասաց մամուլի քարտուղարը:

Նշենք, որ 2025 թվականի հոկտեմբերին Հակակոռուպցիոն կոմիտեն հայտարարություն տարածեց, որ քրեական վարույթի շրջանակում մեղադրանք է առաջադրվել Բյուրեղավան համայնքի ղեկավարին՝ 9 դրվագով պաշտոնեական լիազորությունները չարաշահելու համար (ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մաս): Քրեական վարույթն առնչվում է ձեւական աճուրդների միջոցով հողերի ապօրինի օտարմանը: Համայնքապետի նկատմամբ որպես խափանման միջոց են կիրառվել բացակայելու արգելքն ու պաշտոնավարման կասեցումը: Նույն օրը Բյուրեղավան համայնքի ղեկավարն իր ֆեյսբուքյան էջում գրեց, որ պաշտոնավարման կասեցման մասին տեղեկացել է մամուլի հրապարակումներից: «Այդ մասին որեւէ կերպ իրազեկված չեմ եղել, մինչդեռ, նման պայմաններում կարող էր առաջանալ մի վիճակ, որ համայնքի ղեկավարը լիազորությունները կասեցված վիճակում կայացներ համայնքային նշանակության որոշումներ: Այսպիսով, վարույթն իրականացնող մարմինն անտեսել է ոչ միայն իմ, այլեւ համայնքի հազարավոր բնակիչների շահերը: Դատարանը կորոշի՝ մեղավո՞ր եմ, թե՝ ոչ: Մեր համայնքում բոլորը գիտեն, թե ով ով է՝ իր ապրածով եւ արած գործերով: Մի քանի չկողմնորոշված, անդեմ անձինք ամեն ինչ անում են՝ մեր միասնությունը եւ քաղաքի անդորրը խանգարելու համար: Իրենք չեն հաջողելու: Հետագայում կներկայացնեմ մանրամասներ՝ կոնկրետ անուններով»,- գրել էր Բալասյանը: Ամիսներ անցան, համայնքապետը շարունակեց պաշտոնավարել: Նշենք, որ Հակոբ Բալասյանը 2008-2017թթ. Բյուրեղավան համայնքի ղեկավարն է եղել: 2017-ից Բյուրեղավան խոշորացված համայնքի ղեկավարն է: ԲՀ կուսակցության շնորհիվ քաղաքապետ դարձած Բալասյանն այժմ ճամբարափոխ է եղել եւ աշխատում է ՔՊ-ի համար:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Մակրոնի այցը Գյումրի՝ սկանդալով է ուղեկցվել

Մինչ իշխանությունը փորձում է մայիսի 4-5-ին Երեւանում կայացած ԵՄ համայնքի գագաթնաժողովն իր փիառին ծառայեցնել, հատկապես Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի՝ Հայաստան կատարած պետական այցին են հատուկ կարեւորություն տալիս, ընդգծում իրենց իբր ինքնիշխանությունը, լեգիտիմությունը եւ հայտարարում, թե աշխարհի առաջնորդները հաշվի են նստում իրենց հետ, քանզի Հայաստանն ազատագրել են ռուսի լծից ու ժողբաստիոն դարձրել, մեզ պատմեցին, որ Գյումրիում Փաշինյան-Մակրոն այցի ընթացքում սկանդալային միջադեպ է գրանցվել, ինչն ապշեցրել է նաեւ Ֆրանսիայի նախագահին եւ նրա պատվիրակությանը, քանի որ ի ցույց է դրել Հայաստանում հաստատված «ժողովրդավարական» բարքերը:

Հիշեցնենք, որ մայիսի 5-ին՝ Երեւանում մեկնարկած գագաթնաժողովի հաջորդ օրը, Մակրոնն ու Փաշինյանն այցելեցին Գյումրի, հայրաքաղաքի կենտրոնական հրապարակում մեծ համերգ տեղի ունեցավ, որտեղից էլ Մակրոնն ուղեւորվեց «Զվարթնոց», որպեսզի վերադառնա Ֆրանսիա: Մենք գրել էինք, որ Գյումրի այցի ընթացքում նախատեսված է եղել շրջայց կատարել քաղաքի թիվ 10 դպրոց, որը ֆրանսիական թեքումով է եւ կառուցվել է 1988 թվականի ավերիչ երկրաշարժից հետո՝ ֆրանսիական իշխանության ջանքերով: Բայց այցը չի կայացել: Մեզ լրացուցիչ մանրամասներ պատմեցին այդ մասին: Մոտ երեք ամիս դպրոցի ուսուցչական կոլեկտիվն ու աշակերտները պատրաստվել են Ֆրանսիայի նախագահի եւ Հայաստանի վարչապետի համատեղ այցին, անգամ դպրոցը կոսմետիկ վերանորոգել են, այցի օրը անվտանգային խիստ միջոցառումներ ձեռնարկել, բառի բուն իմաստով՝ սանրել են տարածքը, բոլոր ուսուցիչների եւ աշակերտների մուտքը դպրոց թույլատրել են մետաղորսիչներով մանրակրկիտ զննումից հետո: Վերջին պահին դպրոցի անձնակազմին տեղեկացրել են, որ Մակրոնը չի գա՝ չի հասցնում:

Իրականում, նախատեսված ժամին Մակրոնն ու իր պատվիրակությունը, որ ուղղաթիռով են մեկնել Գյումրի, տեղում են եղել, սակայն Փաշինյանն ուշացել է, եւ դպրոց այցը նրա ուշանալու պատճառով է չեղարկվել: Մակրոնի աշխատակազմից դպրոցի տնօրենին առաջարկել են՝ իրենց ողջույնի խոսքն ու կազմակերպված միջոցառումը տեղափոխել Վարդանանց հրապարակ, որտեղ երեկոյան համերգ էր տեղի ունենալու: Ասել են, որ Ֆրանսիայի նախագահի գրաֆիկը հագեցած է, ուստի չեն կարողացել նախատեսված ծրագրից շեղումներ ունենալ: Դպրոցի տնօրինությունն էլ համաձայնել է: Պատվավոր հյուրից հրավեր ստանալով՝ դպրոցի աշակերտներն ու ուսուցիչներն ուղեւորվել են Վարդանանց հրապարակ ու փորձել են շարժվել ետնաբեմում, որ Մակրոնի այցի առիթով պատրաստած միջոցառումը բեմահարթակից ներկայացնեն: Սակայն այստեղ էլ հանդիպել են Փաշինյանի թիկնազորի դիմադրությանը: Բանն այն է, որ բեմից պետք է ելույթ ունենար Փաշինյանը, հետո համերգն էր լինելու, ուստի տարածքը շրջափակված է եղել նրա թիկնազորի կողմից: Տնօրենը փորձել է բացատրել, որ ֆրանսիացի հյուրից է եղել հրավերը, սակայն մեզ ասացին, որ նույնիսկ քաջքշուկ է տեղի ունեցել, հրմշտոց, տնօրենն անգամ ընկել է, Մակրոնի աշխատակազմից են միջամտել՝ հավաստիացնելով, որ Ֆրանսիայի նախագահն է հրավիրել, եւ ապշել են Փաշինյանի թիկնապահների բիրտ պահվածքից: Սակայն դպրոցի տնօրինությունը ստիպված է եղել զիջել, եւ բավարարվել են միայն Ֆրանսիայի նախագահի հետ լուսանկարվելով: Երեկ մեզ չհաջողվեց զրուցել տնօրեն Լիանա Վարդանյանի հետ, սակայն դպրոցի ֆեյսբուքյան էջում այդ օրվա մասին տեղադրված հաղորդագրությունից պարզ դարձավ, որ Մակրոնի այցը դպրոց չի կայացել, եւ նա անձամբ հրավիրել է նրանց հրապարակ. «2026թ. մայիսի 5-ին նախադեպը չունեցող իրադարձություն տեղի ունեցավ Գյումրու թիվ 10 հիմնական դպրոցում: Հայաստան ժամանած ԵՄ պատվիրակությունը հյուրընկալվեց Գյումրիում: Ֆրանսիայի Հանրապետության նախարարներ՝ Ֆրանսիայի եվրոպական հարցերով նախարար-պատվիրակ Բենջամին Հադդադը, Ֆրանսիայի ՀՈՒ եւ վետերանների հարցերով լիազոր նախարար Ալիս Ռուֆոն, Ֆրանսիայի գյուղատնտեսության նախարար Միշել Ֆուրնիեն, Ֆրանսիայի փոխդեսպան Ժուլի Ֆորը եւ մի շարք ֆրանսիացի բարձրաստիճան պաշտոնյաներ այցելեցին մեր դպրոց, որտեղ աշակերտները հայկական պարով եւ ֆրանսիական երգերով դիմավորեցին նրանց: Դպրոցի բակում տեղակայված խաչքարի մոտ ֆրանսիացի հյուրերը հարգանքի տուրք մատուցեցին 1988 թ. ավերիչ երկրաշարժի անմեղ զոհերի հիշատակին: Ֆրանսիայի նախագահ պարոն Մակրոնի հատուկ հրավերով աշակերտները մասնակցեցին Գյումրիում տեղի ունեցած «Երաժշտական կամուրջ. Հայաստան-Ֆրանսիա» խորագրով համերգին»,- նշված է հաղորդագրության մեջ:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

Հունիսի 7-ին ինչպես կպատասխանեն Փարաքարցիները ՔՊ-ին

Հունիսի 7-ի ընտրություններին ընդառաջ՝ Փարաքարում քաղաքական մթնոլորտը լարված է: Համայնքում դեռ շարունակում են քննարկել «Ապրելու երկիր» կուսակցությունից առաջադրված եւ Փարաքարի համայնքապետ ընտրված Վալոդյա Գրիգորյանի սպանությունը, որը շատ ծանր տարան համայնքի բնակիչները եւ ոչ մի կերպ չեն մոռանում: Փարաքարի բնակիչները խոսում են այն մասին, որ մինչ օրս սպասում են գործի ամբողջական բացահայտմանն ու պատասխանատուների հայտնաբերմանը: Ըստ նրանց՝ տեղի ունեցածից հետո համայնքում ձեւավորվել է անվստահության մթնոլորտ, իսկ առաջիկա ընտրությունները շատերի կողմից ընկալվում են նաեւ որպես այդ սպանությանը եւ դրա քննությանը վերաբերմունք արտահայտելու հնարավորություն: Քաղաքական շրջանակներում եւս թեման շարունակում են ակտիվ քննարկել: Որոշ ուժեր հայտարարում են, որ համայնքի բնակիչները պետք է իրենց քվեով գնահատական տան ոչ միայն տեղական խնդիրներին, այլեւ ընդհանուր քաղաքական պատասխանատվության հարցին: Ընդդիմադիր համայնքապետի սպանության մեջ շատերն ուղղակի կամ անուղղակի մեղադրում են իշխանություններին: Ոմանք, սակայն, կոչ են անում ընտրությունները չկապել չավարտված քրեական գործի հետ եւ սպասել իրավական գործընթացների ավարտին:

Այս ֆոնին հունիսի 7-ի ընտրությունները Փարաքարում դիտարկվում են որպես կարեւոր քաղաքական իրադարձություն, որտեղ համայնքի բնակիչների մասնակցությունն ու դիրքորոշումը կարող են մեծ ազդեցություն ունենալ հետագա զարգացումների վրա:

«Ապրելու երկիր» կուսակցության համահիմնադիր **Մեսրոպ Առաքելյանը**, «Հրապարակ»-ի հետ զրույցում անդրադառնալով փարաքարցիների ընտրությանը, տարվող քարոզարշավին, նշեց. «Մեր թիմակիցները զբաղվում են, ընդհանուր հասարակական տրամադրությունները, հուսանք, կշարունակեն մնալ ընդդեմ իշխանության, քանի որ Վալոդյա Գրիգորյանի սպանության չբացահայտումը մտահոգություն է առաջացնում բնակիչների մոտ, եւ համայնքապետարանը շարունակում է իր ակտիվ աշխատանքը՝ նաեւ Վալոդյայի խոստումները կատարելու համար: Դժվար է հիմա գնահատական տալ, թե ընտրողն ինչ գործոններ հաշվի առնելով է գնալու ընտրության: Հաշվի առնելով, որ սա Ազգային ժողովի համապետական ընտրություն է, հուսով ենք, որ բազմաթիվ գործոնների մեջ Վալոդյա Գրիգորյանի գործունեությունը, նրա քաղաքական ճանապարհը ընտրողների մոտ կարեւոր գործոն կլինի»:

Նշենք, որ Ռուբեն Վարդանյանի հիմնադրած «Ապրելու երկիր» կուսակցությունը վերջին տարիներին բազմաթիվ համայնքներում է մասնակցել ընտրություններին եւ հաղթել, նրանք համայնքապետեր եւ ավագանու խմբակցություններ ունեն մի շարք համայնքներում: Իսկ օրեր առաջ «Ապրելու երկիր» կուսակցությունը հայտարարեց, որ միանում է «Ուժեղ Հայաստան» կուսակցությանը. նրանց ցուցակում «Ապրելու երկրից» ավագանու երկու անդամ է ընդգրկված:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

ԿԱՐԾԻՔ

ՈՒՐԱԽ ԿԼԻՆԵՄ, ՈՐ ՍԱ ՉԼԻՆԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, ԲԱՅՑ ԿԱՐԾՈՒՄ ԵՄ՝ ԿԴԱԴԱՐԵՑՎԻ

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

5 ամիս է՝ Հայաստանում գործում է առողջության համընդհանուր ապահովագրությունը: Փորձեցինք հասկանալ, թե եվրոպական որ երկրներում ինչպես է գործում այս համակարգը: Օրինակ՝ 65-ից բարձր տարիքի մարդկանց դեպքում անվճար է, թե՞ մասնակի վճարովի, եւ եթե վճարում են՝ որքա՞ն:

«Առողջության իրավունք» ՀԿ նախագահ **Անուշ Պողոսյանը** մեզ ներկայացրեց. «Եվրոպական երկրներում լավագույն եւ կայացած ապահովագրություն ունի Գերմանիան: Ես նաեւ եղել եմ Չեխիայում, ուսումնասիրել եմ իրենց ապահովագրությունը, որը շատ սոցիալական է: Սոցիալական ապահովագրության հիմքում ընկած ապահովագրությունը ծածկողական է, հատկապես՝ խոցելի խմբերի համար: Իսկ մեզ մոտ ապահովագրությունը հակառակ տրամաբանությունն ունի: Այնպես են արել, որ աղքատները վճարում են հարուստների համար: Այսինքն՝ դրել են ստանդարտ գումար, ոչ թե աշխատավարձի հետ կապված, ինչը ենթադրում է, որ, օրինակ, 2 մլն դրամ եւ 200 հազար դրամ ստացող աշխատողը վճարում են նույն ապահովագրավճարը եւ ստանում են նույն բժշկական ծառայությունը: Ստացվում է, որ ցածր աշխատավարձ ստացողներն ավելի շատ են վճարում ապահովագրավճար՝ տոկոսային առումով, քան՝ բարձր աշխատավարձ ստացողները: Սա սոցիալական լինելուց հեռու է: Սրանում է մեր ապահովագրական աբսուրդը: Բոլոր տեղերում կան ապահովագրական տարանջատումներ, կան ապահովագրության տարբեր փաթեթներ, դրանք ընտրվում են քաղաքացու կողմից: Իսկ մեզ մոտ ի՞նչ են ասում. ասում են՝ մենք ձեզ պետական ապահովագրությունը տալիս ենք այսքան, իսկ եթե դուք ուզում եք ճոխություններ, գնացեք՝ մասնավորից առանձին ապահովագրություն առեք, ինչն անհասկանալի է: Օրինակ՝ պետական աշխատողները, մասնավոր ֆիրմաները, որոնք իրենց աշխատակիցներին ապահովագրում են, կամ Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունները ստիպված են կամ առնել 2 ապահովագրություն, կամ էլ տուժում են աշխատակիցները: Ասում են՝ դուք ունեք պետական ապահովագրություն՝ նեղ հնարավորություններով, այլեւս իրենք չեն ապահովագրում մասնավորին, եւ շատ ծառայություններից այդ քաղաքացիները չեն կարողանում օգտվել: Կոնկրետ, երբ թմբկահարվում է, հիմա էլ՝ քարոզարշավին, որ ուռուցքով հիվանդները բացառապես անվճար են ստանում այդ բուժումները, հենց հատությունն արել են անվճար, դեռ 2014 թվականից կատարվում էին սրտի անվճար վիրահատություններ եւ բազմաթիվ նմանատիպ վիրահատություններ: Պարզապես դրա մասին չէին խոսում քարոզարշավներում»:

Իսկ ինչպե՞ս են դրսում բուժում ամենածանր հիվանդություններն ու կատարում վիրահատություններ՝ անվճա՞ր, թե՞ վճարովի: «Սոցիալական ծրագրերի շրջանակներում բազմաթիվ վիրահատություններ կատարվում են ապահովագրական փաթեթի շրջանակներում: Եթե դա գերթանկարժեք ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումով է, դրա համար կա «համավճար» հասկացությունը, բայց իրականում այն պաթոլոգիաները, որոնք կյանքին վտանգ են սպառնում, պլանային չեն, բացառապես անվճար սկզբունքով են կատարվում: Քաղաքացին է ընտրում, թե ինչ ապահովագրության ծավալ վերցնի: Եթե ընտրել է ամբողջական ապահովագրական փաթեթը, ապա անգամ այդ գերթանկարժեք ծառայություններից կարող է օգտվել: Տարբեր երկրներ տարբեր փորձ ունեն: Երկրներ կան, որ այդ փաթեթի հետ նաեւ ստոմատոլոգիան են առաջարկում, եթե քաղաքացին ընտրում է ստոմատոլոգիայով ապահովագրությունը: Քանի որ այնտեղ շատ թանկ են այդ ծառայությունները, հիմնականում քաղաքացիներն ընտրում են ամբողջական փաթեթները»:

5 ամիս է՝ քաղաքացիներն օգտվում են առողջության համընդհանուր ապահովագրությունից. ինչպե՞ս կամփոփեք այս ամիսների արդյունքները: «Ապահովագրական բազմաթիվ ծառայություններ նույն պետպատվերի կրկնօրինակումն են, սակայն քաղաքացիներն այս դեպքում օգտվել են: Օգտվել են բազմաթիվ ծառայություններից՝ աչքի վիրահատություններ եւ այլն: Քաղաքացիները քաջ գիտակցում են, որ սա կարող է լինել ժամանակավոր, եւ դրա համար ավելի շատ են ծանրաբեռնում հիվանդանոցները, ուզում են արագ դրանից օգտվել: Գնահատականներ, ես կարծում եմ, պետք է տրվեն հուլիս, օգոստոս ամիսներին, որովհետեւ, երբ նայում ենք բյուջեի առումով, տեսնում ենք, որ տարեկան բյուջեի համամասնությամբ բավականին գերածախս է կատարվել դեղորայքի մասով: Ես ուրախ կլինեմ, որ սա չլինի նախընտրական ծառայություն, որը հուլիսի կեսերին կդադարեցվի, եւ մեր քաղաքացիները կկանգնեն փաստի առաջ: Ցավոք, կանխագուշակում եմ, որ այդպես էլ լինելու է: Այնպես որ, այս փուլում ինչ պետք է քաղաքացուն, թող հասցի անել: Չնայած մեղադրում են ինձ, ասում են՝ պանիկա ենք առաջացնում, խորհուրդ կտամ՝ արագ իրենց առողջության համար դիմել, քանի դեռ կատարվում է բժշկական սպասարկումը: Դրանից հետո, բնականաբար, ապահովագրությունը չեն դադարեցնի, սակայն կլինեն այնպիսի սաստող մեխանիզմներ, որ քաղաքացիներն ավելի քիչ կդիմեն, օրինակ՝ ամբուլատոր ծառայությանը ներքին կարգով կհորդորեն, դա արել են բազմաթիվ անգամ պետպատվերի դեպքում, ուղեգրումներ չանել եւ նման բազմաթիվ բաներ»:

ՈՎՔԵՐ ԻՄ ԷՇՈՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՆԵԼ ԷԻՆ, ԻՐԵՆՑ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ՔԱՅԼ ԱՆԵՆ

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021 թվականի մայիսին իջեւանցի **Սեւադա Ղուկասյանն** էշով Իջեւանից Երեւան էր եկել՝ Նիկոլ Փաշինյանի ետեւից: Ըստ նրա՝ Իջեւանում հին ավանդույթ կա. դավաճանին էշի վրա թարս նստեցրած՝ քաղաքով պտտեցնում են: Հաշվի առնելով, որ Փաշինյանը դավաճանել է հայ ժողովրդին եւ հայոց պետականությանը, իջեւանցին, էշը վերցրած, դեռ հինգ տարի առաջ Ազգային ժողովի դարպասների մոտ հասել՝ փորձում էր իրականացնել պապերից ժառանգած այդ ավանդույթը: «Եկել եմ մեր դավաճանին տանեմ: Սա ակցիա չի, իրոք՝ լուրջ տրամադրված, եկել եմ: Ես Աչաջուր գյուղից եմ, ինքն իմ համագյուղացուն՝ Օնիկ Գասպարյանին դավաճան է համարում, որը շատ մեծ ներդրում ունի: Ես էլ իջեւանցի տղա եմ, ամաչում եմ ասեմ՝ իջեւանցի եմ: Հիմա որ վաղը ասելիք ունենամ մեր ժողովրդին, էշով եկել եմ, որ տանեմ մեր շաշին: Մեր իշուկի անունը կակռազ Իլիամիկ ա, ինքն իրեն շատ լավ կզգա, որ Իլիամիկի վրա նստած՝ քաղաքով պտտվի»,- 2021-ի ընտրություններից առաջ ասել էր աչաջուրցի Սեւադան: Հետո նրան սկսեցին հետապնդել, բայց այդ իրադարձություններից ուղիղ 5 տարի անց որոշեցինք զրուցել Սեւադայի հետ:

- Օրեր առաջ, երբ Ռոբերտ Քոչարյանն Իջեւան էր եկել՝ նախընտրական քարոզարշավի շրջանակներում, քեզ եւս նկատեցինք բազմության մեջ: Ո՞ւմ եք աջակցում ընտրություններում, ի՞նչ սպասելիքներ ունեք: Ի՞նչ իրավիճակ է Տավուշի մարզում:

- «Հայաստան» դաշինքին եմ աջակցում: Տավուշի մարզում իրավիճակն այնպիսին է, ինչպիսին՝ գրեթե ողջ Հայաստանում: Ոչ մի առանձնակի տարբերություն չկա, ժողովուրդը դուրս է եկել էյֆորիայից եւ գիտակցում է, թե ինչ է տեղի ունենում: Այս ամենին նպաստել են իշխանությունները՝ պարագլխի առաջնորդությամբ: Էսքան վատ բաներ արեցին, սրանք մեր գլխին չարիք են, էսքան հիմարություններ են դուրս տալիս, պատերազմով են սպառնում, եւ այդ ամենի արդյունքում վերջապես հասարակությունը հասկանում է, որ սրանք մեծագույն չարիք են մեր գլխին:

- Այսինքն՝ Փաշինյանի իջեւանցի լինելը Իջեւանում դեր չի՞ խաղում:

- Հենց դա եմ ասում՝ ոչ մի տարբերություն չկա: Մարդկանց մեծ մասն ուշքի է եկել: Կիրանցից տարածքներ տվեցին Ադրբեջանին, ցավով եմ նշում, բայց էն, որ ասում են. չկա չարիք՝ առանց բարիքի… մի լավ բան եղավ այս ամենի արդյունքում՝ ժողովուրդը սթափվեց: Սրանց էսքան հիմարությունների արդյունքում, սրանց վտանգավոր գործողությունների արդյունքում մեր ժողովուրդը եկավ գիտակցության: Նիկոլը բացահայտ ստախոս է: Ստախոս է ու հողատու է:

- Իշխանություններն ասում են, որ ընդդիմությունը պատերազմի եռագլուխ կուսակցություններից է կազմված: Իշխանավարման երեք տարիներին երեք պատերազմի պատճառ դարձած իշխանությունը պատերազմի ուժեր է անվանում այն ուժերին, որոնց իշխանավարման տարիներին սահմանին կրակոց չի հնչել, հող չի հանձնվել: Ինչպե՞ս եք վերաբերվում իշխանությունների այս գնահատականներին:

- Մի նոր ֆրազա պետք է հորինե՞ն, թե՞ չէ, որպեսզի էս հասարակությանը նորից մոլորեցնեն: Քանի կար՝ նախկին-ներկա էին խաղացնում, սեւ-սպիտակ էին անում, հիմա դրանց ժամկետն անցել է, էդ թեզերը վառված, պալիտ եղած թեզեր են, Նիկոլը նոր բան է մտածել: Ես կարծում եմ, որ ընդդիմությանը պատերազմի հետ կապելը կամ նրանց եռագլուխ անվանելը հիմարություն է, էն կարգի հիմարություն, որ անգամ քաղաքականապես անգրագետ մարդիկ, գյուղացի, հասարակ ժողովուրդը հասկանում է, թե իրականում ինչ է կատարվում: Սրանք սաղին վառել-թողել են:

- Իսկ ինչո՞ւ եք հենց Քոչարյանին աջակցում, նրա դեմ հակաքարոզչություն են անում, ասում են՝ անցողիկ շեմը չի հաղթահարի, աջակցում եք, որ հաղթահարի՞:

- Դե, բնական է, որ էդպես պետք է ասեն Քոչարյանի մասին: Նման ապուշություններ դուրս են տալիս նիկոլական շրջանակները: Քոչարյանին թերագնահատելը նույնպես մի տեխնոլոգիա է՝ հանրության այն խավին մոլորեցնելու համար, որը մշտապես գնում է պոտենցիալ հաղթողի հետեւից:

- Այսինքն՝ կարծում եք, որ Քոչարյանը կհաղթի:

- Ես հավատում եմ, վստահ եմ, որ նա կհաղթի: Ես հասարակության հետ ամենօրյա շփումներ եմ ունենում, եւ դա ակնհայտ է:

- Եթե Նիկոլը հաղթի ընտրություններում, չարժե՞ մի անգամ եւս էշով գալ նրա հետեւից:

- Դե, մի հետաքրքիր բան եմ մտածելու, չեմ ուզում հիմա էդ մասին խոսեմ, կկանխեն: Էշին հավես չարավ, պիտի նոր բան մտածենք, որ հավեսը գա: Հեծանիվ քշել շատ է սիրում, գուցե հեծանիվով մի բան մտածենք: Էս պահի դրությամբ նրան տեղը դնելու ամենալավ տարբերակն ընտրությունների միջոցով հեռացնելն է: Դա ամենաքաղաքակիրթ եղանակն է: Բոլոր նրանք, ովքեր իմ էշով գործողությունը հավանել էին ու իմ կողքին կանգնել, հունիսի 7-ին կարող են իրենց քվեարկությամբ հերթական քայլն անել: Ես այս ընտրություններին նույնպես աջակցում եմ Դաշնակցությանն ու «Հայաստան» դաշինքին նրա համար, քանի որ ես նրանց ճանաչում եմ, տեսել եմ նրանց փորձն ու գործունեությունը, նրանց մոտեցումները եւ հարյուր տոկոսով վստահ եմ, որ միայն նրանք կարող են մեր կործանվող հայրենիքը փրկել, ես էլ՝ իրենց հետ: Ինչպես ասում են՝ միասին կարող ենք:

ՄԱՅԻՍ 28

ՈՒՄ ԴԵՄ Է ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ ԶՈՐԱՀԱՆԴԵՍԸ

Մայիսի 28-ին Նիկոլ Փաշինյանը պատրաստվում է Հանրապետության հրապարակում զորահանդես ցուցադրել: Զորահանդեսը ռազմական ուժի եւ հնարավորությունների ցուցադրություն է, որով երկիրը թշնամիներին ցուցադրում է իր ռազմական հնարավորությունները, իր տարածքը եւ քաղաքացիներին պաշտպանելու կարողությունը: Ադրբեջանը, զարմանալիորեն, չի բողոքում, կարող էր, չէ՞, ասել, որ իրենք համարում են, որ այդ զենքն ու զինտեխնիկան ուղղված են իր դեմ, որ դա հայկական ռեւանշիզմի դրսեւորում է: Չի բողոքում, քանի որ համոզված է, որ այդ զորքը, զենքն ու զինտեխնիկան Ադրբեջանի հետ բացարձակ կապ չունեն: Այդ դեպքում ինչի՞ համար է զորահանդեսը, ո՞ւմ դեմ է այն ուղղված:

Մի քանի տեսակետ է շրջանառվում, ըստ որոնց՝ զորահանդեսն ունի նախընտրական նպատակ՝ իշխանության կողմից հասարակությանն իր ուժը ցուցադրելը: Այսինքն, զորահանդեսն ուղղված է ոչ թե երկրի արտաքին թշնամուն, այլ՝ ներքին ընդդիմությանը, հասարակության այն հատվածին, որը պատրաստվում է դեմ քվեարկել իշխանությանը: Զենք ու զորք ցուցադրելով սեփական հասարակությանը՝ Փաշինյանն ուզում է ասել, թե, տեսեք՝ ինչի հետ գործ ունեք, ինչի դեմ եք դուրս գալիս: Սա թույլ փաստարկ է, քանի որ եթե անգամ նա գնա նման խելահեղության եւ որոշի բանակն օգտագործել ներքաղաքական նպատակներով, բանակը դրան չի գնա, զինվորականությունը՝ սպաներն ու շարքայինները, սեփական ժողովրդի վրա զենք չեն օգտագործի: Նախընտրական մյուս նպատակը կարող է լինել սեփական թալանը մի քանի կտոր երկաթով արդարացնելը. 8 տարվա ընթացքում 8 միլիարդից ավելի պետական պարտք են կուտակել, եւ այդ ցուցադրությամբ փորձելու են այդ գումարը դուրս գրել զինտեխնիկայի գնման վրա: Բայց գլխավոր հարցը, այնուամենայնիվ, կմնա այն, թե ում դեմ են ուղղված այդ զենքն ու զինամթերքը, եթե Հայաստանում վերջնական խաղաղություն է հաստատված, եթե Ադրբեջանն այլեւս թշնամի չէ եւ չի սպառնում Հայաստանի անվտանգությանն ու տարածքային ամբողջականությանը, ինչ իմաստ ունեն այդքան փող ծախսելն ու զենք-զինամթերք գնելը:

Իրականում, զորահանդեսն ուղղված է Ռուսաստանի եւ Հայաստանում ռուսական ռազմական ներկայության դեմ: Փաշինյանն իր զորահանդեսով ուզում է վախեցնել Ռուսաստանին, այդ երկրի քաղաքական եւ ռազմական իշխանություններին, երեւի ուզում է ցույց տալ, որ իր իշխանությունն այնքան էլ անպաշտպան չէ, եւ հարկ եղած դեպքում իրենք կարող են նաեւ զենքով եւ զորքով պաշտպանվել: Մի քիչ աբսուրդ է թվում, չէ՞, բայց հենց այդպես է: Եվ ահա թե ինչու:

Փաշինյանը եւ նրա թիմակիցներն արդեն մի քանի ամիս է՝ համառորեն հայտարարում են, որ Ռուսաստանը Հայաստանի դեմ հիբրիդային պատերազմ է մղում, որի նպատակը Հայաստանը ռուսական գուբերնիա դարձնելն է, այսինքն՝ Ռուսաստանին բռնակցելը, եւ դրա դեմ իրենք հերոսական պայքար են մղում՝ թույլ չտալու ռուսական ծրագրերի իրականացումը, եւ նույնիսկ արտաքին օժանդակություն են խնդրում ու ստանում այդ նպատակի իրականացման համար: Ի՞նչ է հիբրիդային պատերազմը, կամ՝ ի՞նչ է հիբրիդայինը: Սա նշանակում է, որ պատերազմը վարվում է տարբեր ճակատներով եւ միջոցներով, ոչ միայն ռազմի դաշտում, զենքով եւ զինամթերով, այլ նաեւ՝ տեղեկատվական, քարոզչական, տնտեսական: Մինչեւ հիմա տեսանելի են եղել այդ, այսպես կոչված, հիբրիդային պատերազմի այլ կոմպոնենտներ. քարոզչականն այն է, որ Ռուսաստանը սպառնում է տնտեսական պատժամիջոցներով՝ գազի գնի բարձրացում, աշխատանքային միգրանտների պայմանների խստացում, դրամական փոխանցումների համար արգելքների սահմանում: Տնտեսականը՝ երբ արդեն խնդիրներ են ստեղծվում պրոիշխանական տնտեսվարողների, իրենց ապրանքների արտահանման կամ ներմուծման համար: Բայց հիբրիդային պատերազմը լիարժեք չէ, եթե չկա դրա ամենակարեւոր բաղադրիչը՝ ռազմականը: Ռուսաստանը Հայաստանում ունի ռազմական ներկայություն՝ 102-րդ ռազմաբազան, որը տեղակայված է Գյումրիում: Արդյո՞ք Ռուսաստանի իշխանությունները կգնան նրան, որ ռազմաբազան կամ դրա կարողություններն օգտագործեն որպես Հայաստանի իշխանության վրա ազդեցության լծակ: Դժվար է միանշանակ ասել, բայց, դատելով Ալեն Սիմոնյանի հայտարարություններից, որտեղ նա Ռուսաստանի գործողություններն Ուկրաինայում եւ Հայաստանում դնում է նույն հարթության վրա, առնվազն նշանակում է, որ Փաշինյանը եւ նրա շրջապատը նման մտավախություն ունեն: Ի վերջո, 102-րդ ռազմաբազայի գոյության հիմնական իմաստը Հայաստանն արտաքին՝ թուրքական սպառնալիքից պաշտպանելն է, Ռուսաստանը կարող է համարել, որ Փաշինյանը եւ նրա իշխանությունը Հայաստանի համար ոչ պակաս թուրքական սպառնալիք են, դրանք Թուրքիայի հայաստանյան ազդեցության միջոցներն են: Նույն տրամաբանությամբ՝ նրանք համարում են, որ Ուկրաինայում կռվում են ոչ թե ուկրաինացիների, այլ հավաքական Արեւմուտքի դեմ, իսկ Ուկրաինայի իշխանություններն ընդամենը գործիք են՝ Արեւմուտքի ծրագրերի իրականացման համար:

Այնպես որ, մայիսի 28-ի զորահանդեսն ուղղված է Ռուսաստանի դեմ, նրա՝ Հայաստանում ունեցած ռազմական ներկայության դեմ: Ուզում են ասել, որ տեսեք՝ թե ինչ ունենք մենք, եւ հարկ եղած դեպքում այս զորքն ու զինտեխնիկան կպաշտպանեն մեզ: Կպաշտպանեն, թե ոչ՝ դա էլ այլ խնդիր է:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԾԱՌՈՒԿՅԱՆ VS ԹԱԹՈՅԱՆ

10-ականների սկզբին տերպետրոսյանական շարժման համակիրներից էի, դադարեցրել եմ, երբ ՀՀ առաջին նախագահը հայտարարեց Գագիկ Ծառուկյանի օգնությամբ բուրժուա-դեմոկրատական հեղափոխություն իրականացնելու մասին: Քանի որ նախկինների օրոք Հանրապետականի հետ մեկտեղ քննադատել եմ նաեւ ԲՀԿ-ին ու չեմ ընդունել ամենահզոր օլիգարխի հետ տերպետրոսյանական «գաղափարական» մերձեցման տեսլականը: Հետո եկան 2018-ի գարնանային օրերը, այնուհետեւ՝ 44-օրյա պատերազմի խայտառակ պարտությունը: Իսկ այսօր կանգնած ենք Ազգային ժողովի՝ հետպատերազմյան երկրորդ ընտրության շեմին: Ու եթե չլիներ «Ուժեղ Հայաստան»-ի հայտնությունը, կկանգնեի երկընտրանքի առջեւ, թե ում տալ այս անգամ ձայնս: Որովհետեւ 2021-ին Նիկոլին պարտված Քոչարյանը կամ նրա «Հայաստան» դաշինքը, որին տվել եմ ձայնս, հաստատ այս անգամ էլ չի կարողանալու միայնակ հաղթել Նիկոլին եւ հավաքելու է ավելի պակաս քվե:

Եվ երկընտրանքն Արման Թաթոյանի «Միասնության թեւեր»-ի ու Ծառուկյանի «Բարգավաճ Հայաստան»-ի միջեւ էր լինելու: Ասեմ, որ դժվարլուծելի երկընտրանք էր լինելու: Քանի որ ԲՀԿ-ի ցուցակի առաջին համար Գագիկ Ծառուկյանը հրաժարվում է հայտարարել, որ ինքն է լինելու վարչապետի թեկնածուն, ասում է՝ 3-4 թեկնածու ունենք, սակայն Ծառուկյանենք այս անգամ լուրջ մակարդակով են պատրաստվել ընտրություններին՝ մշակելով «Առաջարկ Հայաստանին» ծրագիրը, ինչի դրույթներն ավելի քան 80 տոկոսով համապատասխանում են իմ պատկերացումներին՝ նոր իշխանության անելիքների մասին: Այդ մասին տեղեկացա Ֆեյսբուքում Արփինե Հովհաննիսյանի գովազդած VoteArmenia-ի (ՎոութԱրմենիա) կայքէջի 30 հարցին պատասխանելով: Դրանից այնքան էլ չզարմացա, քանի որ, ինչպես նշեցի, այս ընտրության առումով կուսակցական մասնագետների խումբը կատարել էր շատ լուրջ աշխատանք:

Միաժամանակ առկա է Արման Թաթոյանի հանգամանքը, որը 2022-ին, երբ լքում էր ՄԻՊ պաշտոնը, ուներ բացարձակ վստահություն հանրության շրջանում, սակայն գերադասեց զբաղվել գիտամանկավարժական գործունեությամբ Ամերիկյան համալսարանում: Եվ 2022-ին ընդդիմությունը կորցրեց առաջնորդի, որ կարող էր հաջողության հասցնել գործող իշխանության դեմ պայքարը: Հաշվի առնելով նրա գործունեությունը ՄԻՊ-ի պաշտոնում, ինչպես նաեւ՝ կրթվածության բարձր մակարդակը, կարող էր վերածվել վարչապետի լավագույն թեկնածուի: Ինչեւէ, դա տեղի չունեցավ, իսկ նախորդ տարի որոշեց, որ ժամանակն է կրկին զբաղվելու քաղաքականությամբ: Գրանցեց նախաձեռնություն, իսկ այս տարի՝ կուսակցություն ու դարձավ վարչապետի պաշտոնը զբաղեցնող անձի ամենակոշտ քննադատներից մեկը: Ու եթե հրաշք տեղի ունենար՝ Արման Թաթոյանն ու «Առաջարկ Հայաստանին» ծրագիրը միավորվեին, այն կարող էր նաեւ հաջողության հույս ունենալ ս. թ. հունիսի 7-ի ԱԺ ընտրության առումով: Բայց քանի որ կյանքում նման հրաշքներ չեն պատահում, Թաթոյանի «Միասնության թեւեր»-ին էլ ընդամենը կտեսնենք որպես ընդդիմադիր խորհրդարանական խմբակցություն, քանի որ հրաժարվել է հայտարարել, որ ամեն պարագայում կմիանա ընդդիմադիր առաջատար ուժին:



Վերադառնանք Ծառուկյանի «Բարգավաճ Հայաստան»-ին: Բարձր գնահատելով «Առաջարկ Հայաստանին» ծրագիրը՝ չեմ կարող չանդրադառնալ քարոզարշավի լուրջ թերությանը: Քարոզարշավն արդեն ընթանում է մեկ շաբաթ, սակայն Ծառուկյանի կողմնակիցները չգիտեն, թե ով է լինելու վարչապետի իրենց թեկնածուն, ինչն ընտրական գործընթացի առումով, մեղմ ասած, անհեթեթ իրավիճակ է ստեղծում, հատկապես՝ այնպիսի երկրում, ինչպիսին Հայաստանն է, որտեղ նախընտրական մրցակցությունը տեղի է ունենում ոչ թե ծրագրային դրույթների, այլ՝ քաղաքական այս կամ այն ուժի առաջնորդների կերպարների միջեւ: Չնայած հասկանալի է, թե ինչու է գաղտնի պահվում ԲՀԿ-ական թեկնածուն: Նախկինների օրոք նախարարներ նշանակող եւ հանող Ծառուկյանն այդպես էլ չկարողացավ բարձրանալ պետության ղեկավարի մակարդակին: Նույնիսկ ազգակործան պատուհաս անվանված Նիկոլի պարագայում ինքը չի դիտարկվում որպես պոտենցիալ ղեկավար, չնայած այն բանին, որ նույն Ծառուկյանը ժամանակին լավ էլ կառավարել է Հայաստանի օլիմպիական կոմիտեն՝ գրագետ օգնականների ու համախոհների աջակցությամբ:

Ի դեպ, 20-րդ դարասկզբին ԱՄՆ-ում դատ է ընթացել ավտոարդյունաբերության հիմնադիրներից Հենրի Ֆորդի եւ նրան իր հոդվածներից մեկում, կարծեմ, տեխնիկապես անգրագետ անվանած լրագրողի միջեւ: Դատը շահել է Ֆորդը՝ ցույց տալով, որ ինքն օգտագործել է իր օգնականների գրագիտությունն ու կարողությունները: Եվ դա չի խանգարել, որպեսզի իր արտադրած «Ֆորդ» մակնիշի մեքենաները շուկայում առաջատար լինեին բազում տարիներ:

Վախթանգ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԾԵԼ ԵՆ ՄԱՆՐ ՇՈՒՍՏՐԻՈՒԹՅԱՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՌԴ նախագահ Պուտինը Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի օրը՝ մայիսի 9-ին, լրագրողների հարցին պատասխանելով ասաց, որ ժամանակ է տալիս Նիկոլ Փաշինյանին՝ վերջնական որոշում կայացնելու՝ ԵՄ, թե ԵԱՏՄ: Անգամ առաջարկեց հանրաքվեի դնել այդ հարցը, որ հայ ժողովուրդն իր դիրքորոշումը հայտնի եւ եթե համաձայն է, գնանք «փափուկ ապահարզանի»: Դրան հաջորդեցին ՌԴ-ի կողմից բազմաթիվ հայտարարություններ: ՌԴ ԱԳՆ ԱՊՀ երկրների դեպարտամենտի տնօրեն Միխայիլ Կալուգինը հայ-ռուսական հարաբերությունների վերաբերյալ հայտարարություններ արեց, Կոմկուսի առաջնորդ Զյուգանովը հայտարարեց, որ վերընտրվելու դեպքում պետք է Փաշինյանի մուտքը Ռուսաստան փակել եւ այլն: «Հրապարակը» զրուցել է քաղաքագետ **Հակոբ Բաղալյանի** հետ:

- Կհաջողվի՞ «փափուկ ապահարզան» իրականացնել Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ, եթե զարգացումները գնան այնպես, ինչպես նախատեսել են այս իշխանությունները:

- Պիտի լինի ապահարզանը, որպեսզի հասկանալի լինի՝ փափուկ է, կոշտ է: Միայն ձեւակերպումներով դատելը դժվար է, եւ այստեղ անկասկած է, որ այդ գործընթացը լինելու է շատ բարդ ու բազմաշերտ, եթե այդպիսի իրավիճակ ձեւավորվի, եւ եթե իրադարձությունների ընթացքը հասնի այդ կետին: Ես, այդուհանդերձ, կարծում եմ, որ այդ հայտարարություններն ավելի շատ իրավիճակային տրամադրությամբ արվող հայտարարություններ են, որոնց ընդհանուր համատեքստն այն է, որ Ռուսաստանը պարզապես Երեւանի համար բարձրացնում է իր շահերի գինը նախընտրական այս պրոցեսում՝ տեսնելով, որ մյուս աշխարհաքաղաքական խաղացողները եւս իրենց գինն են թելադրում եւ բարձրացնում են խաղադրույքները Երեւանի հետ հարաբերություններում:

- Իսկ դա ի՞նչ կարժենա Հայաստանի համար, ենթադրենք՝ հայկական կողմն ընդունեց խաղի այդ կանոնները:

- Որեւէ աշխարհաքաղաքական կենտրոնին վճարվելիք գինը չի լինում թեթեւ եւ չի լինում տանելի: Ցանկացած աշխարհաքաղաքական կենտրոնի հետ հարաբերություններում եթե բանը հասնում է գին վճարելուն, ապա այդ գինը լինում է բավականին ծանր: Եվ դա է պատճառը, որ մշտապես կարեւոր է չդառնալ այդպիսի գործընթացի մասնակից, չբերել հարաբերություններն այդպիսի կետի, երբ, այսպես ասենք, դիվանագիտությունը, ներողություն եմ խնդրում ընթերցողից մի քիչ ժողովրդական եւ ոչ գրական այս ձեւակերպման համար, վերածվում է մանր շուստրիության: Բայց, ցավոք սրտի, մենք գործ ունենք Հայաստանի արտաքին քաղաքականության այսպիսի տրանսֆորմացիայի հետ: Եվ այստեղ էական չէ՝ դա արվում է Ռուսաստանի հանդեպ, Եվրամիության հանդեպ, Միացյալ Նահանգների, թե որեւէ մեկի: Բնական է, որ Ռուսաստանից Հայաստանն ունի սոցիալ-տնտեսական մեծ կախվածություն, եւ խնդիրներն առաջին հերթին հարվածելու են հասարակությանը՝ այդ ուղղությամբ: Բայց սրանով չի սահմանափակվում Ռուսաստանի ազդեցությունը Հայաստանում եւ Կովկասում՝ ընդհանրապես, որքան էլ առերեւույթ այդ ազդեցությունը զգալիորեն նվազել է, եւ որքան էլ թուլացել է Ռուսաստանի ներուժը: Բոլոր դեպքերում, չի կարելի հարաբերությունները որեւէ աշխարհաքաղաքական կենտրոնի հետ հասցնել մի կետի, երբ անգամ իրավիճակային տրամաբանությամբ այդ կենտրոնները պետք է, կամ անհրաժեշտ են համարում խոսել, ահա, այդպիսի հռետորաբանությամբ:

- Կալուգինը հայտարարել է, որ ՌԴ-ն չի պատրաստվում զիջել Հարավային Կովկասում իր ազդեցությունը, եւ Ռուսաստանը շահագրգռված է Հարավային Կովկասի «3+3» ձեւաչափի պահպանմամբ: Սա ինչի՞ մասին է:

- Ռուսաստանը տեւական ժամանակ ռեգիոնում գործում էր մարտավարական նահանջի տրամաբանությամբ՝ հաշվի առնելով ուկրաինական ճակատում խնդիրները, մեծ ջանքեր, ռեսուրսներ պահանջելը: Կախված Ուկրաինայի ուղղությամբ իրավիճակի որոշ փոփոխությունից կամ միտումներից, ինչպես նաեւ՝ կախված այն հանգամանքից, որ Միացյալ Նահանգները բավականին բարդ վիճակում հայտնվեց Իրանի ուղղությամբ, եւ խորքային առումով փոխվում է Իրանի դերը լայն ռեգիոնալ համատեքստում, Ռուսաստանը կարող է ավելի ակտիվացնել իր քաղաքական հետաքրքրությունը կովկասյան ռեգիոնի ուղղությամբ, իսկ այն, որ Ռուսաստանը մտադիր չէ հեռանալ Կովկասից, ես մատնանշել եմ բազմիցս, եւ այդ թվում մի առանցքային հանգամանք՝ դա ռուս-իրանական ռազմավարական գործընկերության մեծ պայմանագիրն է, որը կնքվեց 2025 թ. հունվարին: Այդ պայմանագրի առանցքային ազդեցության ուղղություններից մեկը նաեւ կովկասյան ռեգիոնն է, պարզապես փոխվում է Ռուսաստանի ավանդական գործելաոճը կամ մեթոդաբանությունը ռեգիոնալ քաղաքականության տեսանկյունից: Բնական է՝ այդ փոփոխությունը շատ տեւական ժամանակահատված պահանջող երեւույթ է, որովհետեւ խոսքը շատ մեծ տրամաչափ ունեցող աշխարհաքաղաքական խաղացողի եւ աշխարհաքաղաքական պրոցեսների մասին է, բայց դրանց տրամաբանությունը հենց դա է:

- Կալուգինը խոսել է նաեւ այն մասին, որ ՌԴ առաջարկը՝ ԱԷԿ-ի մասով, կարող է բավարարել Հայաստանի կարիքները մեկ տարով: Այդպես ուզում են ցույց տալ, որ վերադարձի ինչ-որ պատուհա՞ն են թողնում, եթե հակառուսականության գծից դուրս գանք:

- Ես չեմ կարծում, որ Երեւանը հակառուսականության գծի մեջ է: Ես կարծում եմ՝ Երեւանը պարզապես փորձում է մանեւրել աշխարհաքաղաքական կենտրոնների միջեւ՝ լուծելու Հայաստանում իշխանության հարցը, եւ այս համատեքստում նաեւ տեղի են ունենում հայ-ռուսական պրոցեսում որոշակի առերեւույթ զարգացումներ, որոնք ստեղծում են հակառուսականության տպավորություն: Իմ գնահատմամբ, դա պարզապես տպավորություն է, որովհետեւ պրոցեսների տրամաբանությունը որոշակիորեն այլ է:

- Պուտինն առաջարկում էր ռեֆերենդում անցկացնել՝ հասկանալու. հայ ժողովուրդն ուզո՞ւմ է գնալ ԵՄ, թե՞ ուզում է պահպանել ՌԴ-ի հետ դաշնակցային ֆորմատը: Պուտինն իսկապե՞ս հույս ունի, որ Հայաստանի իշխանությունները դա կնախաձեռնեն, թե՞ այլ բան նկատի ուներ:

- Իմ գնահատմամբ, այս հայտարարությունն այն մասին է, որ Ռուսաստանն իր շահերի տեսանկյունից, իր համար հետաքրքրական հարցերի տեսանկյունից սահմանելու է բավականին բարձր խաղադրույքներ եւ մտադիր չէ հետ մնալ, դիցուք, Եվրամիությունից: Միեւնույն ժամանակ, այս հայտարարություններով փորձ է արվում Երեւանի համար խորհրդարանի ընտրության գինը բարձրացնել, այսպես ասենք, Ռուսաստանի հանդեպ՝ տեսնելով, թե ինչպես են իրենց համար գինը բարձրացնում մյուս աշխարհաքաղաքական կենտրոնները: Ինչ վերաբերում է բուն թեմային, ապա այստեղ ընդամենը Պուտինը բարձրաձայնել է այն, ինչն ամրագրված է Հայաստանի սահմանադրությամբ: ՀՀ Սահմանադրության 205 հոդվածով ամրագրված է, որ վերպետական միջազգային կազմակերպություններին անդամակցումը պետք է լինի հանրաքվեով: Այլ կերպ ասած՝ այստեղ հարցն այն չէ, թե Հայաստանի իշխանությունը Պուտինի առաջարկը կամ հորդորը լսելու է կամ չի լսելու: Այստեղ կա Հայաստանի սահմանադրության պահանջ, ու Պուտինի բարձրաձայնածը դե ֆակտո հենց այդ պահանջի մասին է, եւ անկախ նրանից՝ Պուտինը կխոսեր այդ մասին, թե ոչ, Հայաստանի սահմանադրությունը պարտադիր է Հայաստանի իշխանության եւ քաղաքացիների կատարման համար: Հետեւաբար, այդ ամենից անկախ, եթե կա վերպետական կառույցին անդամակցելու հարց, ապա այդ հարցը Հայաստանի սահմանադրությամբ պետք է լուծվի հանրաքվեի միջոցով:

Հայկա ԱԼՈՅԱՆ

ՄԻ ԿՈՂՄԻՑ՝ ՍԱՆԿՑԻԱՆԵՐ ԵՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ, ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՑ՝ ԳԱԶ ԳՆՈՒՄ

Ներկայացրել են Ռուսաստանի դեմ ԵՄ նոր՝ 21-րդ սանկցիաների փաթեթի համաձայնեցման բանակցությունները: Եվրահանձնաժողովից համապատասխան հայտ է ուղարկվել անդամ երկրներին: Մոտավոր հայտնի է նաեւ, թե որոնք են լինելու հիմնական ուղղությունները. նոր սանկցիոն փաթեթում՝ ռուսական ստվերային նավատորմ, ռազմարդյունաբերական ոլորտի ձեռնարկություններ եւ այլն: Այս անգամ նույնիսկ Ռուս ուղղափառ եկեղեցու հովվապետ, Մոսկվայի եւ Համայն Ռուսիո պատրիարք Կիրիլն ու մի շարք բարձրաստիճան եկեղեցականներ կարող են հայտնվել այդ ցանկում: Նախկինում նման մտադրություն եղել է, սակայն չի իրականացվել՝ Հունգարիայի արդեն նախկին վարչապետ Վիկտոր Օրբանի պատճառով, որը դեմ է եղել դրան: Հիմա արդեն, երբ Հունգարիայում այլ կաբինետ է ձեւավորվել, այդ արգելանքը հաղթահարված է:

Սակայն պարզվում է, որ իրականությունն այնքան էլ միագիծ չէ, որքան կարելի է պատկերացնել՝ սանկցիաների մասին հաղորդումները լսելիս: Պարզվում է, որ Եվրամիությունը մի կողմից սանկցիաներ է սահմանում ՌԴ դեմ, մյուս կողմից՝ շեշտակի ավելացնում է ռուսական հեղուկացված կամ սեղմված գազի գնումները: Ընդ որում, այս ուղղությամբ առաջատար են Ֆրանսիան, Իսպանիան եւ Բելգիան:

Սպասելի էր, եթե հաշվի առնենք, որ երկակի ստանդարտներն ու երկերեսանիությունը հարյուրամյակներ շարունակ եվրոպական քաղաքականության ԴՆԹ կոդն են եղել: IEEFA-ի տվյալների համաձայն, ընթացիկ տարվա առաջին եռամսյակին Ֆրանսիան եվրոպական երկրների շարքում ամենաշատն է ներկրել ռուսական հեղուկացված գազ: Ապրիլի տվյալների համաձայն, ներկրումներն աճել են տարեկան 17 տոկոսով: Վերլուծաբաններն ու փորձագետները նշում են, որ, չնայած հանրային տիրույթում հնչած հայտարարություններին, էներգետիկ սեկտորը շարունակում է մնալ խիստ խոցելի, եւ դա եվրոպական մայրցամաքի աքիլեսյան գարշապարն է, որը եվրոպացիները դեռ երկար ժամանակ փակել չեն կարողանա: Բրյուսելում, իհարկե, ուզում են ազատվել ռուսական էներգակիրներից ունեցած կախվածությունից, սակայն աշխարհաքաղաքական ներկա վիճակը, իրանական ճգնաժամը եւ հնարավոր այլ ճգնաժամեր, որոնք արդեն սկսում են նախանշվել, կարող են իսպառ ձախողել այդ մտադրությունները: Հատկապես որ Միացյալ Նահանգների հետ էլ հարաբերությունների ներկայիս փուլում Եվրոպային ձեռնտու չէ հայտնվել ամերիկյան էներգակիրներից չափից դուրս մեծ կախվածության մեջ:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ՊԵՏՔ Է ԻՐԵՆ ԸՆՏՐԵՆ, ԹՈՂ ԿԱՐԴԱՆ ԻՐ ԳԻՐՔԸ, ՀԵՏՈ ՈՐՈՇԵՆ

Հարցազրույց գրականագետ, արձակագիր ***Լիլիթ Արզումանյանի*** *հետ*

- Ինչպիսի՞ ընտրություն է լինելու հունիսի 7-ին՝ սովորական, թե՞ ճակատագրական:

- Այս ընտրություններն ընդհանրապես նման չեն մյուս բոլոր ընտրություններին, որովհետեւ՝ առանց չափազանցության, մեր լինել-չլինելու, մեր գոյության խնդիրն է դրված: Ուղղակի սարսափելի վիճակի մեջ ենք: Կան մարդիկ, որոնք գիտակցում ու խենթանում են՝ ինչպես ես, կան մարդիկ, որոնք անտարբեր են, չեն պատկերացնում, եւ, իհարկե, կան մարդիկ էլ, որոնք, ցավոք սրտի, չեն ուզում որեւէ բան ընկալել, հասկանալ, մտածել: Բայց ընտրությունները շատ ծանր են լինելու, շատ ճակատագրական:

- Ինչո՞ւ, ինչպե՞ս եկանք կանգնեցինք Հայաստանի լինել-չլինելու ընտրության առաջ:

- Գիտեք, թե ինչն է սարսափելին. անցյալ օրը մեր ղեկավարը, որի անունը սկզբունքորեն չեմ ուզում տալ, գոռում, ճվում էր ընտրարշավի ժամանակ, թե մարդիկ կան, որոնք ուզում են դառնալ վարչապետ, գլուխները պատերին են տալիս: Կամ՝ իր կարկառուն թիմակիցը հայտարարում է, թե կան մարդիկ, որ ուզում են զավթել իշխանությունը: Ուղղակի մնում ես ապուշ կտրած՝ ի՞նչ է նշանակում, այսինքն՝ էդ վարչապետի աթոռը դու սեփականաշնորհել ես այնպես, որ ով ուզի դառնալ վարչապետ, գլուխը պատռվ պիտի տա: Հասկանո՞ւմ եք, թե ինչ անորմալ իրավիճակում ենք: Ընտրություն է, չէ՞, եւ մարդիկ պետք է գնան ընտրության: Իսկ ընտրությունն ինչի՞ համար է, որ ցանկացած մարդ կարող է դառնալ վարչապետ, եթե դու դառել ես, ուրիշ մեկն էլ կարող է դառնալ: Ի՞նչ է նշանակում՝ զավթում են. դու արդեն 8 տարի զավթել ես եւ հավերժ որոշել ես մնալ:

- Ի՞նչ է դա՝ սպառնալի՞ք, ահաբեկչությո՞ւն, բռնապետի հոխորտանք:

- Ի՞նչ է նշանակում՝ թույլ չենք տալու, ո՞նց կարելի է այդ ճանապարհով գնալ ընտրության: Ամեն ինչ անելու են, ամեն ինչ կարող ենք ենթադրել եւ սպասել, ես սարսափում եմ այդ գաղափարից:

- Հետեւողականորեն մոռացության են մատնում եւ ուրանում մեր արժեքներն ու խորհրդանիշները: Տեսնո՞ւմ եք ազգին ինքնությունից զրկելու եւ բույսի վերածելու միտում:

- Սա ինքնության կորուստ է, ոչ միայն հողի ու հայրենիքի, մենք հիմա կանգնած ենք դրա առաջ: Ես սարսափահար եմ լինում դրանց ամեն քայլից, ի՞նչ է նշանակում՝ Այբբենարանից հանել Մեսրոպ Մաշտոցի նկարը: Ավելի մեծ սրբապղծություն հնարավոր չէ պատկերացնել: Ի՞նչ է նշանակում՝ հայ ղեկավարը կասկածի տակ դնի Հայոց ցեղասպանությունը, ի՞նչ է նշանակում՝ հարձակում մեր դարավոր Եկեղեցու վրա: Եվ ամենասարսափելին այն է, որ երբ ինքը մի բան դուրս է տալիս, իր մանկամիտ թիմակիցները սկսում են դամ քաշել՝ ժողովրդական լեզվով ասած: Ավելի անհեթեթ ու զառանցագին բաներ են խոսում, թե Եկեղեցին չի տեղավորվում պետության մեր մոդելի մեջ: Եվ դեռ կան թերհաս ու մանկամիտ մարդիկ, որ ասում են, թե պայքարը ոչ թե Եկեղեցու դեմ է, այլ՝ կաթողիկոսի: Ո՞նց կարելի է այդ տարրական բաները չհասկանալ, որ սա պայքար է հայ ժողովրդի դեմ, մեր ինքնության, գոյատեւման, մեր ապագայի դեմ: Մեր հիշողությունն են վերացնում:

- Փաշինյանն ասում է՝ ինչո՞վ է Արցախը հայկական եղել: Իսկ ի՞նչ էին անում հազարամյակներ շարունակ հայերն Արցախում՝ չէի՞ն ապրում, չէի՞ն ստեղծում:

- Ախր, տրամաբանական, նորմալ պատասխան զառանցանքին հնարավոր չէ տալ: Երբ լսում ես, թե ինչ է ասում, կորցնում ես հավասարակշռությունդ: Ի՞նչ է նշանակում՝ ինչո՞վ է մերը. Ամարասով, Գանձասարով, Դադիվանքով, բնակչությամբ, դարավոր կեցությամբ: Դա ի՞նչ ասելու բան է: Եթե ինքը հիշողություն չունի, նշանակում է՝ ամբողջ ազգը չունի: Գնացել էիր Արցախ, գոռում էիր՝ Արցախը Հայաստան է, ասում էիր՝ Շուշին մեր պաշտպանական ամրոցն է: Ես չգիտեմ՝ կամ սրա պես կերպար աշխարհում, որն այսօր մի բան ասի, իսկ մի քանի օր հետո՝ բացարձակապես հակադիր բան: Հնարավոր չէ պատկերացնել, մարդկային որեւէ տրամաբանության սահմաններում չի տեղավորվում:

- Կառավարության նոր հայեցակարգում գրել են՝ խրախուսել այն ստեղծագործությունները, որոնք պատերազմի կոչ չեն պարունակում, չեն բորբոքում վրեժ, արգելել այդպիսիները: Մեր մշակույթում կա՞ն նման ստեղծագործություններ: Սրանով չե՞ն արգելելու հայրենասիրական ցանկացած գործ:

- Երբեւէ չենք ունեցել նման ստեղծագործություններ: Գրականության մեջ եղել է մեր անցած պատմական ուղին՝ ինչպես «Վարդանանքը», որ գրվել է պատերազմի ժամանակ ոգին բարձրացնելու համար: Հիմա ի՞նչ՝ ուրանա՞նք մեր պատմությունը: Այսինքն, մեր ժողովրդին վերածում են մանկուրտի՝ հիշողությունը կորցրած բույսի: Ի՞նչ է նշանակում՝ իրական եւ ոչ իրական Հայաստան, դա ի՞նչ զառանցանք է: Կարո՞ղ են բացատրել, թե որն է իրական Հայաստանը: Ոչ մի կերպ չես կարող բացատրել: Ես ունակ չեմ հասկանալ, ընկալել այն, ինչ այսօր կատարվում է մեր հայրենիքում՝ կառավարական մակարդակով: Այսօր մեր պետական գաղափարախոսությունը դեմ է հայրենիքի գաղափարին, հայ մշակույթին, պատմությանը, սիմվոլներին, հայկականության ամեն ինչի:

- Կարո՞ղ ենք ասել, որ սրանք 2018-ին եկան՝ ծրագրված իրագործելու մեր ինքնության ու պատմական ներկայության ոչնչացումը:

- Շատ բարդ է պատասխանելը, որովհետեւ մենք մեր մեղքն ունենք այս ամբողջի մեջ: Ես նա չեմ, որ ամբողջը բարդում է մեկ անձի վրա, թեպետ մեկ անձը մեծ նշանակություն ունի, եթե հատկապես վարչապետ կամ նախագահ է: Պետք չէր նախկինում կուլ գնալ, լռել, երբ անարդարություն էինք տեսնում, պետք էր խոսել: Այդ առումով խիղճս հանգիստ է, որովհետեւ անկախության 30 տարիներին անընդհատ գրել եմ. իմ մեջ կար այն վախը, որ մենք սխալ ենք ապրում: Հիշում եմ. գնացել էինք Արեւմտյան Հայաստան, մեր խումբն ասում էր՝ մի օր ետ ենք բերելու այս հողերը: Ես ցավով մտածում էի՝ նախ պահենք մեր Արցախը, հետո խոսենք մնացածի մասին: Որովհետեւ այնպես, ինչպես մենք էինք ապրում, դժվար էր ընկալել, որ պահելու ենք: Մենք սխալ ապրեցինք նախ կրթության առումով. 30 տարի այս ժողովրդին պետականորեն դեգրադացրինք: Միայն 8 հոդված ունեմ՝ հեռուստատեսության դեմ գրված: Հեռուստատեսություն, որն առանցքային դեր պետք է խաղար նոր ձեւավորվող երկրում, զբաղված էր ժողովրդին դեգրադացնելով տխմարագույն հաղորդումներով, վատ հայերենով, տխմար սերիալներով: Եվ արդյունքն այսօր տեսնում ենք: Եթե ես այսօր մտահոգվում, ընդվզում եմ, չեմ հասկանում այն մարդկանց, ովքեր պաշտպանում են այս իշխանություններին. սա միայն ու միայն կրթության պակաս է: Տատս մի խոսք ուներ, ասում էր՝ նախկին բիբարներն ենք ուտում: Հիմա էն բիբարներն ենք ուտում, էն ցավը, որ մենք տգետ սարքեցինք մեր ժողովրդին: Այսօր մենք առաջնահերթ այդ խնդիրն ունենք, որ սրանցից ազատվելուց հետո պետք է շատ լուրջ ուշադրություն դարձնենք կրթության համակարգին:

Իսկ ի՞նչ կատարվեց 18-ին: Կար դժգոհություն՝ դա անարդարությունն էր, սոցիալական անհավասարությունը, իշխանությունների դեմ դրա ընդվզումը: Ու հանկարծ հայտնվեց սա, թե ոնց հայտնվեց՝ բոլորիս համար անհասկանալի էր: Ընդդիմադիր պատգամավոր էր, որ ականջահաճո ճառեր էր ասում: Որ Արցախը մերն է, Հայաստանը Նորավանքն է, Վանն է, Մուշն է եւ այլն: Այսինքն՝ այն, ինչ ուզում էինք լսել: Եվ մենք կարծում էինք, որ եկել է ճշմարտության, ամրության ինչ-որ ջահակիր: Ժողովուրդը խաբվեց, եւ աբսուրդն այն է, որ մնում է խաբված մինչեւ հիմա: Մենք չհասկացանք, թե մեզ հետ ինչ կատարվեց: Իսկ ի՞նչ կատարվեց Ուկրաինայում. 2 եղբայր ժողովուրդ, եւ հանկարծ ուկրաինացին ատեց ռուսին: Սարքովի, դրսից բերված գաղափարախոսություն էր: Ամենաողբերգականն այն է, որ նայում ես պատմության ընթացքին, փաստորեն, ժողովուրդն ընդամենը ֆիլմի մասսովկա է, ոնց ուզեն՝ կպտտեցնեն, ինչպես այսօր կան մարդիկ, որ ասում են՝ ես չեմ գնալու ընտրության, մեկ ա՝ ամեն ինչ որոշված ա: Այդպես դու քեզ դարձնում ես զրո, ասում ես՝ ես ոչինչ եմ: Լինելով ՀՀ քաղաքացի՝ չես օգտվում քո ընտրելու իրավունքից: Այդքան տափակ, այդքան անուղեղ կարելի՞ է լինել:

- Սրանք հետեւանք են անկրթության, քաղաքական ու պետական անկարողության: Մշակույթ, գրականություն, արժեհամակարգ ունեցող ազգը չպետք է 8 տարի հանդուրժեր սրանց:

- Մինչեւ հիմա էլ կան հանդուրժողներ: Սա նորօրյա աղանդ է, ինձ համար մեծ ցավ է, որ մեր ժողովրդի մեջ այդ մտածողությամբ մարդիկ կան: Եթե մենք վերջապես ազատվենք այս ամոթալի, անպատվաբեր, խայտառակ իշխանությունից, կասենք, որ ընդամենը մի լավ բան եղավ այս տարիների ընթացքում, երեւաց՝ ով ով է: Տեսեք. կա Գրողների միություն, որը գրողների միասնական ձայնն է, այս դեպքում ի՞նչ արժի այդ ձայնը՝ ոչինչ: Միությունն ունի 300-400 անդամ, այսքան բան կատարվեց մեզ հետ, պարտություն, երիտասարդների դրեցինք հողը, Այբբենարանից հանեցին Մաշտոցի նկարը, ցեղասպանությունը դրեցին կասկածի տակ, Եկեղեցու վրա հարձակվեցին, Գրողների միությունը ծպտուն չհանեց: Դա ողբերգություն չէ՞: Հիմա ինձ ասեք՝ ինչի՞ համար է այդ Գրողների միությունը, ո՞ւմ համար է: Եթե հաշվենք, թե ովքեր են գրողներից ցավում ու գժվում, երեւի 10 հոգի չենք հաշվի: Սա ես համարում եմ ազգային ողբերգություն: Չե՞ն հասկանում, թե՞ վախենում են: Երկու դեպքում էլ անտանելի է, մեղադրելի: Էլ չեմ ասում, որ կան գրողներ, որոնք բացահայտ այս ամենի կողմնակիցն են: Դե բացատրիր՝ պե՞տք է այդ գրականությունը մեզ: Պետք չէ: Ու եթե այսօր ժողովուրդն արհամարհում է այդ գրականությունը, գրողին, շատ լավ է անում: Իրենք հարամում են հայ գրականությունը, ներկա, ժամանակակից գրականությունը:

- Ի՞նչ պետք է անեն ընդդիմությունը եւ ժողովուրդը, որ հունիսի 7-ին արդյունքի հասնենք:

- Դժվարանում եմ ասել: Ովքեր այդ աղանդով տառապում են, իմ խորին համոզմամբ, դրանց այլեւս որեւէ բան բացատրել հնարավոր չէ: Դրանք արդեն հիմնավոր ավլած ուղեղներ են, որոնք չեն ուզում մտածել: Ես հարեւան ունեմ, ինչ ասում եմ, ասում է՝ ի՞նչ գիտես: Մի մասն էլ անտարբեր է, եւ ամենասարսափելին դրանք են: Կան մարդիկ, որոնք չեն սարսափում այն գաղափարից, որ կարող է 300 հազար ադրբեջանցի մտնի Հայաստան: Ես հանգիստ ապրել եմ՝ օրհնելով մեր հայ տղամարդկանց, որովհետեւ ամբողջ կյանքում մենակ, ազատ, որ ժամն էլ լինի, թատրոնից, կինոյից տուն եմ եկել՝ առանց մտահոգվելու: Եթե կան մեր ազգի մեջ մարդիկ, որոնք դրա մասին չեն մտածում, չեն անհանգստանում, ես չեմ կարող դրանց ո՛չ հայ համարել, ո՛չ էլ մարդ ընդհանրապես: Իսկ ընդդիմությանն այսօր մնում է միայն համոզել, որ ընտրության գնալը պարտադիր է, որովհետեւ իրոք ճակատագրական իրավիճակում ենք, չգիտեմ էլ ինչ ձեւով՝ պետք է խնդրել, համոզել մեր հասարակությանը, որ գնան ընտրության, որովհետեւ մեր հայրենիքը փրկել է պետք՝ բառի բուն իմաստով:

- Տեսնո՞ւմ եք փրկվելու հնարավորություն, հույս:

- Նայած օր: Օր կա, որ լսում եմ ժողովրդին, հուսադրվում եմ, օր էլ կա, որ այնպիսի ապուշ բաներ եմ լսում էլի նույն ժողովրդից, որ հուսահատվում եմ: Ես միայն մի բան գիտեմ. դարերով ապրել ենք, եւ չի կարող պատահել, որ մի հատ չմարդ, անհասկանալի ինչ-որ երեւույթ հանկարծ վերացնի հայ ժողովրդին: Ապրելու ենք: Ես մեր պատմությանն եմ ապավինում: Սարսափելին այն է, որ այսօր մենք կռվում ենք ոչ թե թշնամու դեմ, այլ՝ սեփական իշխանության: Պարզապես խնդրում եմ այն մարդկանց, ովքեր պետք է իրեն ընտրեն, թող կարդան իր գիրքը, հետո որոշեն:

Հուսիկ Արա

ՉԻՆԱՍՏԱՆ. ԵՐԿՈՒ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ, ՈՐՈՆՔ ՇՐՋԵԼՈՒ ԵՆ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Անվիճարկելի ճշմարտություն է՝ մաքառող, պայքարող ժողովուրդներն ապագա ունեն: Ծույլ եւ պայքարի անընդունակ ժողովուրդները ոչնչանում, անհետանում են: Այսօր կյանքը հայ ժողովրդին պարտադրում է անօրինակ մաքառում՝ ամենժամյա համառ աշխատանք, պետականաշինություն, անվտանգության ամրապնդում, արտադրությունների զարգացում, ազգային դոկտրինի վերաձեւակերպում: Մի՞թե 8 տարի առաջ որեւէ մեկը կարող էր պատկերացնել, որ հայ ժողովրդի լինելիության հարցը կդրվի պատմության դատաստանի առաջ: Բայց այսօրվա իշխանությունները մեր ժողովրդին տարան հենց այդ ճանապարհով: Եվ հիմա ոչ թե համազգային պայքարի ու ինքնակազմակերպման ճանապարհով են մեզ առաջնորդում, այլ խնդիրները մոռացության տալու, ամենօրյա խրախճանքների, «ֆեստիվառ» զվարճությունների, խաշ-խորոված-խաշլամայի, զուռնա-դհոլի, անհոգ կյանքի կեղծ փիլիսոփայությամբ: Ժողովրդին ներշնչում են, որ ինքը ոչ թե ստեղծող է, այլ ընդամենը սպառող ամբոխ: Հայ ժողովուրդը պետք է սթափվի եւ դեն նետի այս ծանր պարտադրանքը: Ինչպե՞ս: Երկու օրինակ բերեմ, որոնք ինձ զարմացնում են:

Չինաստանում վերջերս անսովոր բան է տեղի ունեցել. «Ֆերրարիով», «Ռոլս-Ռոյսով», «Հերմեսով» պարծեցող, միլիոնավոր հետեւորդներ ունեցող ինֆլյուենսերները (օնլայն մեծ լսարան ունեցող հանրային անձինք) մի օր պարզապես... անհետացել են համացանցից: Առանց աղմկոտ դատավարությունների, առանց սկանդալների: Երեկ դու «հաջողության խորհրդանիշ» էիր, այսօր՝ ոչինչ: Քո էջը պարզապես չի բացվում: Չինաստանի իշխանությունները որոշել են, որ ցուցադրական հարստության պաշտամունքը սկսել է քայքայել հասարակությանը, ոչ թե ոգեշնչել: Այն բլոգերները, որոնք տարիներ շարունակ ցուցադրում էին միլիոնավոր յուան արժեցող պայուսակներ, թանկարժեք մեքենաներ, շքեղ առանձնատներ ու անսահման սպառում, զանգվածաբար անհետացել են սոցիալական հարթակներից: Ամենահայտնիներից մեկը՝ Վան Հոնգցյուան Սին, որին անվանում էին «չինական Քիմ Քարդաշյան», ուներ միլիոնավոր հետեւորդներ, մի օրում կորցրեց իր էջերը: Եվ դա ուղեկցվում էր շատ հստակ պետական ուղերձով. «Պայքարում ենք փողի պաշտամունքի դեմ: Չինաստանը չի ցանկանում, որ երիտասարդների իդեալը դառնա ցուցադրական սպառումը: Չինաստանն ուզում է բոլորովին այլ երազանք ձեւավորել՝ ոչ թե՝ «հարստացիր ու ցուցադրիր», այլ՝ «աշխատի՛ր ու օգտակար եղիր»: Չինաստանի իշխանությունները նոր կանոններ սահմանեցին, որոնց համաձայն՝ այն բլոգերները, որոնք խոսում են բժշկությունից, իրավունքից, ֆինանսներից, կրթությունից կամ հոգեբանությունից, պետք է ունենան մասնագիտական հավաստագիր: Հակառակ դեպքում նրանց էջերը եւս կարգելափակվեն: Այսինքն՝ այլեւս չի թույլատրվում էկրանի առաջ «կապիկություններ» անել եւ միլիոնավոր մարդկանց սովորեցնել՝ «ինչպես բուժել դեպրեսիան», «որտեղ ներդրում անել», «ինչպես դաստիարակել երեխաներին», կամ տարածել ցնդաբանություններ՝ «դարձիր կրիպտոմիլիոնատեր», «ապրիր գեղեցիկ ու մի լարվիր»: Չինաստանն առաջ է մղում բոլորովին այլ արժեքներ՝ համեստություն, կարգապահություն, քրտնաջան աշխատանք, կրթություն, ինժեներական մտածողություն, արտադրություն, եւ, ամենակարեւորը՝ դա պետք է օգտակար լինի երկրին: Չինաստանը հասկացել է մի բան, որը մենք դեռ չենք ուզում հասկանալ. հասարակության ապագան կերտում են այն մարդիկ, որոնցով հիանում է երիտասարդությունը: Եթե երիտասարդը հիանում է անաշխատ փող ցուցադրող պարապ բլոգերով՝ հասարակությունը քայքայվում է: Եթե հիանում է գիտնականով, ինժեներով, արտադրող մարդով՝ հասարակությունը վերածնվում է: Չինաստանն այսօր առաջիններից է, որը փորձում է վերակառուցել հանրային հարգանքի ամբողջ համակարգը՝ ոչ թե սպառողի, այլ ստեղծողի շուրջ: Եվ այդ մեղվաջան ժողովրդի մեջ միլիոններով ծնվում են աշխատող, տքնող, ստեղծող մարդիկ:

Երկրորդ օրինակը. մի առավոտ Չանշա քաղաքի բնակիչներն արթնացան ու իրենց պատուհաններից տեսան 10 հարկանի մի բնակելի, որը երեկ... չկար: Չինացի միլիարդատեր ինժեներ Չժան Յուեն ժամանակակից շինարարության նորարարներից է: Նրա ստեղծած «Բրոադ գրուպ» ընկերությունն աշխարհին հայտնի դարձավ այն բանից հետո, երբ Չանշա քաղաքում 10 հարկանի բնակելի շենք կառուցեց ընդամենը 28 ժամ 45 րոպեում: Բայց ամենակարեւորն արագությունը չէ, այլ՝ շինարարության փիլիսոփայության փոփոխությունը: Չժան Յուեն հասկացել էր, որ ավանդական շինարարությունը չափազանց դանդաղ է, աղտոտում է շրջապատը, վտանգավոր է երկրաշարժերի ժամանակ, ահռելի քանակի բետոն է սպառում: 2021թ. նա հիմք դրեց շենքերի մի «արտադրության»՝ այնպես, ինչպես աշխարհում արտադրում են մեքենաներ կամ ինքնաթիռներ: Նման բան աշխարհը չէր տեսել: Շենքի բոլոր մասերը նախապես արտադրվում են գործարանում: Ներսում արդեն տեղադրված են լինում էլեկտրական համակարգերը, ջրագծերը, օդափոխությունը, պատուհանները, ներքին հարդարման մեծ մասը: Այնուհետեւ կռունկներն իրար վրա հավաքում են այդ մոդուլները՝ առանց ավանդական ծանր բետոն օգտագործելու: Շենքը կառուցվում է հատուկ չժանգոտվող պողպատից, որը շատ ավելի թեթեւ եւ ամուր է սովորական շինանյութերից: Սա պարզապես տեխնոլոգիական լուծում չէ: Սա համաշխարհային հեղափոխություն է շինարարության մեջ: Քիչ սխալներ, քիչ թափոն, մեծ արագություն, բարձր ստանդարտացում, երկրաշարժակայունություն, նվազ բնապահպանական վնաս եւ հսկայական արտադրողականություն: Այսօր նույն ուղղությամբ աշխատում են Ճապոնիան, Սինգապուրը, սկանդինավյան երկրները, ԱՄՆ-ի մի շարք տեխնոլոգիական ընկերություններ:

Հիմա հայ ժողովուրդը պետք է որոշի՝ ո՞ր ճանապարհով է ուզում գնալ: Արարելո՞վ, աշխատելո՞վ, պետություն կառուցելո՞վ, թե՞ զվարճանալով, կապիկություններ անելով եւ իրականությունից փախչելով: Եթե մենք ընտրում ենք մաքառման ճանապարհը, ապա նախ պետք է ազատվենք այս իշխանություններից, որոնք ժողովրդին տանում են կերուխումերի, հեշտ փող աշխատելու, զվարճանքի կործանարար ճանապարհով:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ



բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am

Ստորագրված է տպագրության 15.05.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏՆ ՈՒՄ Է ԱՋԱԿՑՈՒՄ

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Նոյեմբերյանի համայնքապետ Արսեն Աղաբաբյանը, որը համայնքի ղեկավար է դարձել ընդդիմադիր «Ապրելու երկիր» կուսակցության շնորհիվ, ըստ տեղացիների՝ իշխանությունների հետ ինչ-որ անհասկանալի «խաղերի» մեջ է: Նա՝ որպես ընդդիմադիր համայնքապետ, աչքի չի ընկել իշխանությունների մասին սուր եւ քննադատական հայտարարություններով, անգամ այն դեպքում, երբ Տավուշից տարածքներ էին հանձնվում Ադրբեջանին, Աղաբաբյանը խուսափում էր իշխանությունների գործողություններին գնահատական տալուց: Չնայած լրագրողները փորձում էին բազմիցս կապվել նրա հետ, սակայն նա հրաժարվում էր հարցազրույցներ տալ: Տեղացիներն ասում են, որ Աղաբաբյանը ոչ միայն ռադիկալ ընդդիմադիր չէ, այլեւ քաղաքի վատ մենեջեր է: Նոյեմբերյանն աղբի եւ փոշու մեջ կորած է, ճանապարհները քարուքանդ են, ինչպես որ Իջեւանի ու Դիլիջանի ՔՊ-ական համայնքապետերն են անտերության մատնել իրենց քաղաքները, նույնպիսի վիճակում էլ Նոյեմբերյանն է: Ի դեպ, Բերդի համայնքապետ Աստղիկ Հակոբյանը նույնպես իշխանությունների հետ շատ ջերմ հարաբերություններ ունի, չնայած այն բանին, որ նա եւս ընդդիմադիր ուժի ներկայացուցիչ է: Տիկին Աստղիկի ֆեյսբուքյան էջն ուսումնասիրելով տպավորություն ստացանք, որ նա ՔՊ-ական է, քանի որ գրեթե բոլոր լուսանկարները մարզպետ Հայկ Ղալումյանի հետ են: Անխոս, բնական երեւույթ է, որ ընդդիմադիր համայնքի ղեկավարը համագործակցում է ՔՊ-ական մարզպետի կամ ՔՊ-ական կառավարության հետ, սակայն հասկանալի չէ, թե ընդդիմադիր համայնքապետերն ինչու են դա այդքան եռանդով անում եւ «ջերմ լուսանկարներ» հրապարակում հատկապես Փաշինյանի քավոր մարզպետի հետ: Այս մարզում, փաստորեն, սովորական բան է ընդդիմադիրի քողի տակ իշխանությունների հետ քաղցր-մեղցր հարաբերություններ պահպանելը:

Բայց այս վճռորոշ փուլում, երբ հայկականությունը պահելու եւ թուրք-ադրբեջանական վիլայեթ դառնալու ընտրության շեմին է Հայաստանը, եւ կենաց-մահու պայքար է տարվում, մեզ հետաքրքրեց, թե ինչ դիրքորոշում ունի «Ապրելու երկիր» կուսակցության անդամ, Նոյեմբերյանի քաղաքապետ Արսեն Աղաբաբյանը: «Հրապարակը» նրան հարցրեց՝ ի՞նչ դիրքորոշում ունեք ներքաղաքական պրոցեսների հարցում, ո՞ր ուժին եք աջակցելու. ի դեպ, «Ապրելու երկիր» կուսակցությունը միացել է «Ուժեղ Հայաստանին»: Հարցրինք նաեւ, թե ինչ կարծիք ունի Սամվել Կարապետյանի գլխավորած ուժի մասին, սակայն, լսելով մեր հարցը, նա արագ ասաց. «Կներեք, ես հիմա գնում եմ ժողովի, չեմ կարող խոսել», եւ անջատեց հեռախոսը ու այլեւս մեր զանգերին չպատասխանեց: Ի դեպ, մենք համայնքապետին զանգահարել էինք ժամը 13:30-ին՝ ընդմիջման ժամին, դժվար թե այդ ժամին համայնքապետարանում ինչ-որ ժողով լիներ: «Ապրելու երկիր» կուսակցության համահիմնադիր **Մեսրոպ Առաքելյանը**, սակայն, վստահ է, որ, շնորհիվ Աղաբաբյանի, գործող իշխանությունը Նոյեմբերյանում պարտվելու է: Նա «Հրապարակի» հետ զրույցում խոսելով համայնքապետի մասին՝ ասաց. «Աղաբաբյանը մեր կուսակցության քաղխորհրդի անդամ է, եւ իշխանությունը Նոյեմբերյանում պարտվելու է»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am